ISSN 1829-0469
ISSN 2579-2687

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ՝ ԱՄՍԱԹԵՐԹ

ԵՐԱԺՇՏՍ

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա
Yerevan Komitas State Conservatory
Ереванская государственная консерватория им.Комитаса

Լույս է տեսել ISSN 1829-0469 թղթային տարբերակը 2005թ. դեկտեմբերի 25-ից (231)

#3 մարտ 2025

Ծնորհավորում ենք կանանց մայրության և գեղեցկության տոնի առթիվ

Մոր սիրտը անդունդ է, որի խորքում միշտ ներում կգտնվի:

ՕՆՈՐԵ ԴԸ ԲԱԼԶԱԿ

Կնոջ սրտի մեջ է նրա հոգին ու բանականությունը:

ՌԵՄԻ ԴԸ ԳՈՒՐՄՈՆ

Կնոջ առաջին ու կարևորագույն հատկանիշը հեզահամբուրությունն է:

ԺԱՆ ԺԱԿ ՌՈՒՍՈ

ՀՀ ԿԳՄՄՆ փոխնախարար Դանիել Դանիելյանը հանդիպեց ԵՊԿ Հայ ավանդական երաժշտության կատարողական արվեստի ամբիոնի դասախոսների և ուսանողների հետ

ՀՀ ԿԳՄՄ փոխնախարար Դանիել Դանիելյանը Երևանի պետական կոնսերվատորիայում

2

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, դիրիժոր Սերգեյ Սմբատյան

Քշիշտոֆ Պենդերեցկու անվան ժամանակակից երաժշտության 5-րդ փառատոնը

2

«ՍՏԵՂԾԱԳՈՐԾ ԿԱՆԱՅՔ»

Թերեզա Նաչարյան, Կարինե Հովհաննիսյան, Սոֆի Ստեփանյան

5

«Ճպուռն ու մրջյունը» բալետը վերջին տարիների Երևանի օպերային թատրոնի իսկապես բեղմնավոր գործունեության նոր հաստատումն ու հերթական հավաստումն է

Տեսարան «Ճպուռն ու մրջյունը» բալետից

4

ՀՀ ԿԳՄՍՆ փոխնախարար Դանիել Դանիելյանը հանդիպեց ԵՊԿ Հայ ավանդական երաժշտության կատարողական արվեստի ամբիոնի դասախոսների և ուսանողների հետ

1

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը հանդիպել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Հայ ավանդական երաժշտության կատարողական արվեստի ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների հետ:

Հանդիպումը մեկնարկել է համերգային միջոցառմամբ, որի ընթացքում Հայ ավանդական երաժշտության կատարողական արվեստի ամբիոնի (վարիչ՝ դոցենտ Մարգարիտ Ոսկանյան) ուսանողները հանդես են եկել գործիքային և վոկալ կատարումներով:

Նա նշել է, որ հանդիպման նպատակն է քննարկել ոլորտին առնչվող հարցերը՝ համատեղ լուծումներ գտնելու և բաց երկխոսություն ծավալելու նպատակով:

Նրա խոսքով՝ նախարարությունը կարևորում է հայ ավանդական երաժշտության կատարողական արվեստի ոլորտի զարգացումը՝ այս համատեքստում մատնանշելով պետական հոգածության ներքո գործող խմբերի՝ Ազգային նվագարանների պետական նվագախմբի, «Ակունք» ազգագրական անսամբլի, Թաթուլ Ալթունյանի անվան Հայաստանի երգի-պարի պետական վաստակավոր անսամբլի, Պարի պետական և «Բարեկամություն» անսամբլներում գործող ժողովրդական գործիքների անսամբլների գործունեությունը:

Նախարարի տեղակալն առանձնակի շեշտել է այս ոլորտի կրթական բաղադրիչը՝ նշելով, որ ժողովրդական գործիքների ուսուցումն սկսվում է վաղ հասակից՝ երաժշտական դպրոցներում, քոլեջներում, շարունակվում՝ կոնսերվատորիայում: Ըստ նրա՝ շատ կարևոր է ավանդական երաժշտության գրավիչ մատուցման միջոցով հետաքրքրություն առաջացնել երեխաների շրջանում՝ հայ ազգային գործիքների և ավանդական երաժշտության նկատմամբ:

«Հայ ավանդական երաժշտությունը և գործիքները հանրահռչակելու և աշխարհում տարածելու համար անհրաժեշտ է շեշտը դնել կրթական գործընթացների և ոլորտն առավել գրավիչ դարձնելու քայլերի վրա», – նշել է նախարարի տեղակալը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաև մի շարք հարցեր՝ հայ ավանդական երաժշտության ուսուցման, հայկական ժողովրդական նվագարանների կատարողական արվեստի հետագա զարգացման, ուսուցման նոր մեթոդների կիրառման, կրթության շարունակականության ապահովման, ավանդական երաժշտության վերաբերյալ ուսումնական գրականության, միջմշակութային համագործակցության, արտերկրում հայկական երաժշտության տարածման, հանրահռչակման և այլնի վերաբերյալ:

Հանդիպման ընթացքում նախարարի տեղակալն անդրադարձել է նաև ավանդույթների մշակութային նշանակությանն ու ժամանակակից աշխարհում դրանց դերակատարությանը:

Այս համատեքստում ուսանողները նշել են, որ ժողովրդական գործիքների ուսանողական երիտասարդական անսամբլ ձևավորելու մտադրություն ունեն: Դանիել Դանիելյանը, ի պատասխան, նշել է, որ հարթակների տրամադրման հարցում նախարարությունը պատրաստակամ է աջակցել երիտասարդ կատարողներին:

Հանդիպման ավարտին նախարարի տեղակալը նշել է, որ ուսանողների ու դասախոսների կողմից հնչեցրած բոլոր հարցերն ու առաջարկությունները կգրանցվեն՝ լուծման ուղիներ նախանշելու և առաջիկայում նորից համատեղ քննարկելու նպատակով:

Ռուբեն Սապրյան, Դավիթ Ղազարյան, Ծովինար Մովսիսյան, Օլգա Նուրիջանյան, Մհեր Սմիրջանյան

Սամվել Երկնափեշյան, Մարգարիտ Ոսկանյան, Ռուբեն Սապրյան, Դավիթ Ղազարյան, ԵՊԿ ուսանողներ

ԵՊԿ Հայ ավանդական երաժշտության կատարողական արվեստի ամբիոնի ուսանողները, դիրիժոր՝ Սամվել Երկնափեշյան

Արամ Հովհաննիսյան, ԵՊԿ դասախոսներ, աշխատակիցներ

https://escs.am/am/news/27875?fbclid=IwY2xjawJHuFdleHRuA2FlbQIxMAABHb7jyF21HN5WhUUTvT0VOc990bzdf_Be-y0prkfvoRTeqovphqy99RYxJw_aem_qZgycMzkijW8BszVRaRwkA

Քշիշտոֆ Պենդերեցկու անվան ժամանակակից երաժշտության 5-րդ փառատոնը

1

Մարտի 5-ին, Արամ Խաչատրյան համերգասրահում կայացավ Ք. Պենդերեցկու անվան ժամանակակից երաժշտության 5-րդ փառատոնի առաջին համերգը: Դիրիժոր Սերգեյ Սմբատյանի ղեկավարությամբ հնչեցին Քշիշտոֆ Պենդերեցկու, Ավետ Տերտերյանի և նվագախմբի ռեզիդենտ՝ կոմպոզիտոր Էրիկ Ուիթաքրի (ում «Պրելյուդը» նվագախմբի համար կատարվեց առաջին անգամ) ստեղծագործությունները:

Փառատոնը, որը կազմակերպել է Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը, անցկացվելու է մարտի 5-29-ը:

Պենդերեցկու անվան ժամանակակից երաժշտության փառատոնի առաքելությունն է հայ երաժշտասերներին հաղորդակից դարձնել համաշխարհային ժամանակակից դասական երաժշտությանը, ծանոթացնել աշխարհի տարբեր երկրներում ստեղծագործող մերօրյա կոմպոզիտորների հետ, ինչպես նաև վառ պահել Քշիշտոֆ Պենդերեցկու անունը:

Համաշխարհային ժամանակակից երաժշտությունը ներկայացնող փառատոնը ներառում է 3 սիմֆոնիկ համերգ, որոնց ընթացքում Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը կկատարի համաշխարհային և հայաստանյան պրեմիերաներ: Նշեմ, որ շատ յուրօրինակ մեկնաբանվեց Տերտերյանական 3-րդ Սիմֆոնիան: Լսել եմ այս էլ 3-րդ անգամ և համոզիչ էր Սմբատյանի նորովի մոտեցումը՝ այն մեկնաբանությամբ, որպես ինտելեկտուալ քաղաքակրթության երկրի տաղանդի դրսևորման օրրան:

Մարտի 15-ի համերգին տեղի ունեցավ կոմպոզիտոր Լովել Լիբերմանի ալտ սաքսոֆոնի Կոնցերտի համաշխարհային պրեմիերան՝ անվանի սաքսոֆոնահար Քենեթ Ցեի կատարմամբ: Ներկայացվեցին նաև Ֆրանսիս Պուլենկի, Քշիշտոֆ Պենդերեցկու երկերից:

Մարտի 29-ին՝ փառատոնի փակման համերգին, ժամանակակից դասական երաժշտության սիրահարները ներկա եղան Ատոմ Էգոյանի «Արարատ» կինոֆիլմի երաժշտության հայաստանյան պրեմիերային: Ստեղծագործությունը հեղինակել է Մայքլ Դաննան: Համերգի ընթացքում Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի, Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի և ալտահար Սառա Մը-քէլրավիի կատարմամբ հնչեց նաև անվանի վրացի կոմպոզիտոր Գիյա Կանչելիի յուրօրինակ խոհափիլիսոփայական *«Styx»* ստեղծագործությունը: Փակման համերգի ծրագրում ներառված էր նաև Պենդերեցկու երկերից:

Փառատոնի համերգների ղեկավարել են՝ Սերգեյ Սմբատյանը և Բարբարա Դրագանը:

ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ

ԿԱՅԱՑԱՎ ԾՈՎԻՆԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԵՐԳԸ

2025 թ., մարտի 14-ին, ԵՊԿ 4-րդ հարկի դահլիճում տեղի ունեցավ մի կարևորագույն և արժեքավոր դասարանական համերգ, որը ՀՀ «Վաստակավոր մանկավարժ», պատվավոր դոկտոր, ԵՊԿ պրոֆեսոր, «Մանկավարժական Փառք» և «Գրիգոր Նարեկացի» մեդալակիր Ծովինար Հովհաննիսյանի նախաձեռնությամբ անվանվեց «Կոմիտասական»: Համերգի բացումն ազդարարեց ԵՊԿ Հայ ավանդական երաժշտության կատարողական արվեստի ամբիոնի քանոնի դասարանի մագիստրոսականի 1-ին կուրսի ուսանողուհի Անահիտ Հարությունյանը, իր խոսքում նշելով՝

– *Կոմիտաս Վարդապետը՝ Սողոմոն Գևորգի Սողոմոնյանը մկրտվեց Սուրբ Գրքի Հին կտակարանային Սողոմոն իմաստունի անունով և իր անվանակցի իմաստությամբ լուսավորեց և իմաստավորեց մեր հոգևոր կյանքը: Լինելով Գևորգյան հոգևոր ճեմարանի շրջանավարտը, որպես կուսակրոն եկեղեցական՝ ձեռնադրվեց VII դարի նշանավոր կաթողիկոս Կոմիտաս Ա Աղցեցու կոթողային Սուրբ Հռիփսիմե տաճարի և «Մնձինք նուիրեալք» շարականի կերտողի անվամբ և վերագրավ, վերակերտեց և վեր խոյացրեց հայ երաժշտության հինավուրց կառույցը: Մնմահացավ իր բացառիկ հայրենասեր, ազգանվեր, բազմարժանավոր գործունեությամբ. երգիչ, խմբավար, երաժշտագետ, ֆոլկլորագետ, կոմպոզիտոր՝ ստեղծագործական բազմահարուստ ժառանգությամբ. բազմաձայն պատարագ, խմբերգեր, երգեր ձայնի և դաշնամուրի համար, դաշնամուրային պիեսներ:*

Նայելով Կոմիտասի նկարին շարունակեց.

– *Սիրելի և պաշտելի Վարդապետ ընծայաբերել ենք անթիվ անգամներ՝ գեղարվեստական գրքեր, գիտական ուսումնասիրություններ, գեղանկարչական պատկերներ, հուշարձաններ և այլն: Ընդունիր նաև մեր այս փոքրիկ ընծան՝ մեր դասարանական համերգը՝ քո տանը, քո երազած երաժշտանոցում՝ մեզ հասանելի հնարավորություններով, որն ընծայում ենք քեզ քո հանճարեղ ստեղծագործությունների փոխադրումներով մեր նվագարանի՝ քանոնի համար, ենթադրաբար վաստակելով քո հավանությունը:*

«Կոմիտասական» համերգն իր մեջ ներառում էր 15 տարբեր մշակումներ և փոխադրումներ, ինչպես մենանվագային, այնպես էլ դաշնամուրի նվագակցությամբ, անսամբլային ստեղծագործություններ (դուետ, տրիո) քանոն նվագարանի համար, այդ թվում՝ Կոմիտասի հոգևոր, դաշնամուրային, երգչախմբային և այլ ստեղծագործություններ: Համերգին զարկ տրվեց Կոմիտասի «Մեծացուցե»-ով (փոխադրումը՝ Ծ. Հովհաննիսյանի), որը կատարեց Հայ ավանդական երաժշտության կատարողական արվեստի ամբիոնի քանոնի դասարանի բակալավրական կրթության 1-ին կուրսի ուսանողուհի Անի Նիկոլյանը: Այնուհետև, վերոնշյալ դասարանի բակալավրական ավարտական կուրսի ուսանողուհի Լիլիթ Պետրոսյանի մատուցմամբ հնչեց Կոմիտասի «Ծիրանի ծառ» (փոխադրումը՝ Խ. Ավետիսյանի) ստեղծագործությունը՝ դաշնամուրի նվագակցությամբ (կոնցերտմայստեր Ա. Աղաջանյան): Առաջին կուրսի ուսանողուհի Էլեն Թովմասյանը կատարեց Կոմիտասի «Տեր ողորմեա» (փոխադրումը՝ Ծ. Հովհաննիսյանի) շարականը, այնուհետև հնչեցին Կոմիտաս-Անդրիասյան «Գարուն ա»-ն (փոխադրումը՝ Ա. Միրզոյանի) ավարտական կուրսի ուսանողուհի Մարգարիտա Գասպարյանի, 2-րդ կուրսի ուսանողուհի Գոհար Խաչատրյանի՝ Կոմիտասի «Կալի երգ»-ը (փոխադրումը՝ Ծ. Հովհաննիսյանի), ավարտական կուրսի ուսանողուհի Ամալյա Տիգրանյանի՝ Կոմիտասի «Կարնո շորոր»-ը (փոխադրումը՝ Ծ. Հովհաննիսյանի), Կոմիտասի «Ել, ել և Ձար զընգը» (փոխադրումը՝ Ծ. Հովհաննիսյանի) 1-ին կուրսի ուսանողուհի Գրետա Վարդանյանի կատարումներով: Կոմիտաս-Սաղաթելյան «Կոմիտասյան երգերի շարք»-ը հնչեց 3-րդ կուրսի ուսանողուհի Շողեր Խաչատրյանի կատարմամբ, իսկ վերջինիս հաջորդեց Կոմիտասի «Կուժն առա և Գնա-գնա»-ն (փոխադրումը՝ Ծ. Հովհաննիսյանի), զուգանվագը՝ 1-ին կուրսի ուսանողուհի Մերի Մուսինյանի և 2-րդ կուրսի ուսանողուհի Լաուրա Ստեփանյանի կատարմամբ: Համերգի ընթացքում հնչեցին Կոմիտասի դաշնամուրային պարերի՝ Ծ. Հովհաննիսյանի փոխադրումները քանոն նվագարանի համար, այդ թվում՝ «Երանգի», որը հնչեց մագիստրոսական կրթության 1-ին կուրսի ուսանողուհի Անահիտ Հարությունյանի կատարմամբ, «Մանուշակի»՝ մագիստրատրոսականի 2-րդ կուրսի ուսանողուհի Տաթև Հակոբյանի մատուցմամբ, «Ունաբի և Մարալի»՝ բակալավրական կրթության 3-րդ կուրսի ուսանողուհի Լաուրա Թորոսյանի կատարմամբ և «Շուշիկի»՝ Մերի Մուսինյանի կատարմամբ: Պարերին հաջորդեց Կոմիտաս-Սաղաթելյան «Հով արեք»-ը՝ երեք քանոնի համար, կատարեցին 3-րդ կուրսի ուսանողուհիներ՝ Լաուրա Թորոսյանը, Արևիկ Ներկարարյանը և Շողեր Խաչատրյանը: Իսկ համերգը եզրափակվեց Կոմիտաս-Ալթունյան «Քելե, քելե և Շողեր ջան» ստեղծագործությամբ՝ «Ծովաշար» անսամբլի ելույթով:

Լիլիթ Պետրոսյան, Արմեն Աղաջանյան

Ծովինար Հովհաննիսյանն իր դասարանի հետ, դաշնակահար՝ Արմեն Աղաջանյան, ասիստենտ՝ Գայանե Աբաջյան

Անգնահատելի է Կոմիտաս Վարդապետի, Կոմիտաս-մարդու, Կոմիտաս-երաժշտի, Կոմիտաս-բանահավաքի կատարած աշխատանքը: Եվ մենք պարտավոր ենք պահել, պահպանել և արժևորել այն, ինչ արեց Նա, քանզի դա հայ ժողովրդին հաղթանակի տանող եզակի ուղիներից է:

«Մահվան արժանի է այն ժողովուրդը, որ զուրկ է գեղարվեստե, որովհետև ժողովուրդ մը, որ գեղարվեստ չունի, կնշանակե թե զգալու կարողությունը չունի: Եվ ի՞նչ է ժողովուրդ մը՝ որ չի զգար», – ասել է Կոմիտաս Վարդապետը

Ծովինար Հովհաննիսյանի դասարանի սաները

ԳՈՀԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԵՊԿ Հայ ավանդական երաժշտության կատարողական արվեստի ամբիոնի քանոնի բաժնի 2-րդ կուրսի ուսանող

«Ճպուռն ու մրջյունը» բալետը վերջին տարիների Երևանի օպերային թատրոնի իսկապես բեղմնավոր գործունեության նոր հաստատումն ու հերթական հավաստումն է

1

1990-ական թվականներին կոմպոզիտոր Ստեփան Լուսիկյանն իրականացրել էր երաժշտական մշակույթի մի կարևորագույն երևույթ, որը վերաբերում էր բալետարվեստին: Նա ոչ միայն ստեղծել էր հայ իրականության մեջ քիչ հանդիպող նոր բալետ, այլ մանկական բալետ, որի խիստ կարիքը կար, հիմա էլ կա ոչ միայն մեզանում: Աշխարհում քիչ են հեղինակները, ովքեր մանկական բալետային երաժշտություն են գրում: 1995 թ. Ստեփան Լուսիկյանի հրաշալի երաժշտությամբ «Ճպուռն ու մրջյունը» բալետը Մաքսիմ Մարտիրոսյանի խորեոգրաֆիայով բեմադրվեց Երևանի խորեոգրաֆիայի պետական թատրոնում, սակայն կարճ կյանք ունեցավ. Ընդամենը մեկ-երկու ներկայացումից հետո «դժվար տարիների» բերումով խաղացանկից դուրս մնաց: Վերջերս, հուրախություն մշակութասեր հանրության և մանուկների, հիշյալ բալետը նոր կյանք ստացավ շնորհիվ Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի տնօրեն Կարեն Դուրգարյանի նախաձեռնության և միջազգային մրցույթների դափնեկիր, Երևանի պարարվեստի քոլեջի նախկին սան ու ներկայիս տնօրեն, Լոնդոնի բալետի Թագավորական դպրոցի շրջանավարտ, Ֆրանսիայի Թուլուզ քաղաքի «Կապիտոլի» պետական բալետի շուրջ քսան տարիների մենապարող, բալետմայստեր Դավիթ Գալստյանի բեմադրության և նոր լիբրետտոյի: Դիրիժորներն են՝ Աթանես Առաքելյանը և Բաֆֆի Միքայելյանը: Ներկայացման նկարչական ձևավորումն իրականացրել են տաղանդավոր արվեստագետներ՝ բեմադրող նկարիչ Ավետիս Բարսեղյանը, զգեստների ու գլխազարդերի նկարիչ Ռուբինէ Հովհաննիսյանը: Ներկայացման լուսային հազվադեպ հանդիպող լուսավոր ձևավորումն իրականացրել է Եվգենի Գանզբուրգը: Ներկայացմանը մասնակցում են Պարարվեստի պետական քոլեջի 70 սաներ: Բազմաշերտ համագործակցության արդյունքում ստացվել է դասական բալետի միջազգային կարգի ներկայացում, որը բուռն ծափերով ընդունեցին նախ հանդիսատես երեխաները և նրանց հետ միասին՝ մանկական բալետի երևույթով չափազանց ուրախացած ծնողները: Բարձրարվեստ այս ներկայացումը կարելի է նոր նվաճում համարել հայ մշակութային կյանքում, որտեղ իմաստուն կերպով համադրվել են ավագ սերնդի վաստակաշատ կազմի բեմադրական փորձը և մասնագիտական կյանք մտնող նոր սերնդի պատանեկան ու երիտասարդական էներգետիկան՝ կատարողական անմնացորդ նվիրվածությամբ: Համաշխարհային գրականության մեջ հայտնի ու իմաստուն «թափառական» առակը, որը դարերի ընթացքում մշակվել է նաև տաղանդավոր գրողների կողմից՝ Լաֆոնտենի, Իվան Կռիլովի, իր փայլուն հայկական փոխադրման հեղինակի՝ Աթաբեկ Խնկոյանի՝ բալետային ներկայացման բուն դրամատուրգիական նախահիմքն է: Փոքրիկ առակը բեմում դարձել է երկու գործողությամբ լիարժեք ներկայացում, մեկ անգամ ևս հաստատելով, որ ստեղծագործական մտքի համար որևէ կարգի սահմանափակում չկա: Ինչպես գրեթե բոլոր առակները, բալետային այս ներկայացմանը նույնպես ճպուռներն ու մրջյունները մարդկային կերպարանք են ստացել, որոնք իրենց ապրելակերպն արտահայտում են դասական պարի անզուգական արտահայտչականությամբ և որտեղ հստակ երևում են անհոգ զվարճությամբ ապրող ճպուռները և ամենօրյա ժրաջան աշխատանքով՝ մրջյունները: Ի տարբերություն և ի լրացումն առակի Ճպուռն ու Մրջյունը ոչ միայն միայնակ են հանդես գալիս, այլ բեմում մասշտաբայնություն է ստանում, դառնալով ճպուռների և մրջյունների հակադիր պահվածքի մարդհանրություններ: Երկու գործողությունների յոթ պատկերների մեջ են ծավալվում «անհոգների» և «աշխատավորների» իրարամերժ կյանքը, որտեղ լավ ու վատը, ճիշտ ու սխալը հնարամիտ ու խելամիտ կառուցված լիբրետտոյի շնորհիվ, հրաշալի մենազուգախմբապարերի հերթագայությամբ ներկայացվում է հանդիսատեսին: Ընդ որում, լիբրետտոյի հմուտ կառուցվածքը պարզ հասանելի է նաև մանուկ հանդիսականին, որը դասական պարով ներկայացնելու հետ միասին, դաստիարակչական խոր ազդեցիկ նշանակություն է ձեռք բերում: Բալետում, ըստ առակի, Ճպուռ ու Մրջյուն «գլխավոր» դերակատարներ էլ կան, ճպուռներ ու մրջյուններ հանրությունն էլ կան, որոնց ընդհանուր պատկերի օրինակ ներկայացնենք այսպես: Պարային գեղեցիկ նազանքով բեմում հայտնվում է անհոգ կյանքով ապրող գեղեցկուհի Ճպուռը և իր հետ՝ բազմաթիվ գեղեցկուհի ճպուռները և իսկ գլխավոր՝ Մեծ Մրջյունը և մրջյունների աշխատասեր բանակը բեմում հայտնվում են վարակիչ ռիթմիկայով, կազմակերպված աշխատասիրությամբ, որը հավասարապես վերաբերվում է և բնական մրջյուններին, և մրջյունի աշխատասիրություն ու կազմակերպվածություն ունեցող, պատանեկան ավյունով լեցուն մրջյունների դերակատարներին: Նույնիսկ ոչ այնքան վեճի, որքան բանավեճի թեմա դարձավ այն հանգամանքը, որ զուտ պարային կամ հանդեսային մտածողության բերումով, բեմադրող բալետմայստերն ու լիբրետտոյի հեղինակը վերափոխել է առակի և առաջին լիբրետտոյի, և արդյունքում ներկայացման ու ասելիքի վերջաբանը, որտեղ անհոգ Ճպուռին անգործության մեջ մեղադրելու փոխարեն, բեմադրության վերջում համերաշխության են գալիս մրջյունների միասնական հորդորով, Ճպուռի պահվածքը չհանդուրժող Մեծ Մրջյունին մի կերպ համոզում են, որ Ճպուռն ու ճպուռները մասնակցեն ֆինալային մեծ տոնակատարությանը: Դրվատելի է, որ բալետային ներկայացման պրեմիերայի օրերին (մարտ 15, 16, 22, 23) նպաստավոր պայմաններ են ստեղծված մանուկ հանդիսատեսի համար, ովքեր կարող են ցերեկային ժամերին և բավականին հաճախ նշանակված ներկայացումներին ներկա գտնվել: Բալետային այս ներկայացումը, վստահ ենք, ոչ միայն խաղարկային երկար կյանք կունենա, այլև շատ հաջողված բեմադրական կազմը հանդես կգա նոր նախաձեռնություններով, նոր ներկայացումներով: «Ճպուռն ու մրջյունը» բալետը վերջին տարիների Երևանի օպերային թատրոնի իսկապես բեղմնավոր գործունեության նոր հաստատումն ու հերթական հավաստումն է:

Տեսարան Ստեփան Լուսիկյանի «Ճպուռն ու մրջյունը» բալետից

Տեսարաններ Ստեփան Լուսիկյանի «Ճպուռն ու մրջյունը» բալետից

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

https://www.aravot.am/2025/03/19/1476209/

«ՍՏԵՂԾԱԳՈՐԾ ԿԱՆԱՅՔ»

1

Մարտի 11-ի երեկոն Ա. Խաչատրյանի տունթանգարանում նշանավորվեց «Ստեղծագործ կանայք» խորագրի ներքո համերգ-ցուցահանդեսով:

Միավորել գեղեցիկ սեռի տարբեր սերնդի ներկայացուցիչ ստեղծագործողներին՝ ուսանող, շրջանավարտ, դասախոս, սկսնակից մինչև բազմամյա կայացած մասնագետ: Միավորել երաժշտության ասպարեզում տարբեր ներկայացուցիչներին՝ գործիքային կատարող, մեներգիչ, կոմպոզիտոր, երաժշտագետ: Երաժշտական ելույթները միաձուլել արվեստի այլ ճյուղերի, մասնավորապես՝ նկարչության և վիզուալ արտիստների աշխատանքների հետ: Եվ այս բոլորը մեկտեղել մեկ երեկո, մեկ մշակութային վայրում՝ նվիրելով կանանց և գեղեցկության միամյակին: Այսպիսին էր միջոցառման նպատակը և հաջողությամբ իրագործված արդյունքը:

Համերգ-ցուցահանդեսը նախաձեռնել էր ԵՊԿ Լարային կվարտետի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, դասախոս, ջութակահար, ՀԱՖՆ երաժիշտ, միջազգային մրցույթների դափնեկիր Թերեզա Նաչարյանը: Միջոցառման կազմակերպմանը կարևոր և յուրահատուկ մասնակցություն են ունեցել ԵՊԿ ուսումնական ասիստենտ, ՀՊՄՆ երաժիշտ, Երևանի քաղաքապետարանի «Երևան» պատանեկան սիմֆոնիկ նվագախմբի ալտահարների կոնցերտմայստեր Սոնա Թուրաբյանը և Գեղարվեստի ակադեմիայի դասախոս, արվեստաբան Օֆելյա Ազիզյանը:

Համերգ-ցուցահանդեսը կյանքի կոչվեց ԵՊԿ և տունթանգարանի ղեկավարության աջակցությամբ, ի դեմս երաժշտագետ, դոցենտ, արվեստագիտության թեկնածու, ռեկտորի պաշտոնակատար Ծովինար Մովսիսյանի և դաշնակահարուհի, ԵՊԿ պրոֆեսոր, թանգարանի տնօրեն Արմինե Գրիգորյանի, ինչի առիթով կազմակերպիչները հատուկ երախտագիտություն են հայտնում:

Ցուցահանդեսին ներկայացված էին Ռիմա Նանյանի, Լիլիթ Մարտիրոսյանի, Վիկտորիա Շահիբազյանի, Մանանա Մակարյանի, Լուսինե Բաղդասարյանի, Սիրանուշ Մխիթարյանի, Իննա Միքայելյանի, Աննա Մանուկյանի, Միլենա Հովհաննեսյանի, Մարիամ Ստեփանյանի, Անի Սարգսյանի, Ջեմմա Մանուկյանի, Ադել Միքայելյանի, Անուշ Աբրահամյանի հեղինակած նկարները:

Երաժշտական ելույթներին զուգահեռ էկրանին ցուցադրվեցին վիզուալ արտիստներ Ինա Միքայելյանի, Մեգգի Արարատյանի, Անուշ Գուրգենյանի, Եվա Մուրադյանի աշխատանքները:

Բազմազան և ծավալուն էր երեկոյի համերգային հատվածը: Ծրագրում տեղ էին գտել տարբեր դարաշրջանների արևմտաեվրոպացի, ամերիկացի և հայ կին կոմպոզիտորների ստեղծագործություններ, ինչը նույնպես ծառայեց արվեստի յուրահատուկ համայնապատկեր, երաժշտական ուրույն ծաղկեփունջ կազմելուն:

Այսպես, երեկոյի սկզբում հնչեցին վոկալ կատարումներ: XIX դարի փայլուն դաշնակահարուհի և կոմպոզիտոր Կլարա Շումանի «Մի պայծառ առավոտ» և «Ինչո՞ւ ես արտասվում, փթթուն ծաղիկ» երգերը օպ. 23 շարքից կատարեցին ԵՊԿ բակալավրական կրթության 3-րդ կուրսի ուսանողուհիներ Մարիա Դավթյանը և Մարգարիտա Օքրոյանը՝ ԵՊԿ շրջանավարտ Էլեն Կիրակոսյանի նվագակցությամբ:

Հաջորդեց ժամանակակից հայ կին կոմպոզիտոր Աննա Ազիզյանի «Արի, իմ քաղցրիկ աղավնի» երգը (խոսք՝ Պաղտասար Դպիրի)՝ բակալավրական կրթության 4-րդ կուրսի ուսանողուհի Շուշան Այվազյանի կատարմամբ և Գոհար Մաթևոսյանի նվագակցությամբ:

ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ԵՊԿ պրոֆեսոր Վարդ Մանուկյանի «Հայաստան աշխարհ» երգը (խոսք՝ Հովիկ Հովեյանի) հնչեց ԵՊԿ շրջանավարտ Լիանա Սիմոնյանի կատարմամբ:

Երեկոյին տեղ էին գտել ՀՀ ժողովրդական արտիստ, մանկավարժ, հարուստ ստեղծագործական ժառանգություն կերտած Գեղունի Չթչյանի ստեղծագործություններից մի քանիսը: Նրա «Արարատ» երգը (խոսք՝ Հովհաննես Շիրազի) կատարեց մագիստրոսական կրթության 1-ին կուրսի ուսանողուհի Գայանե Բաղդասարյանը, նվագակցող՝ Էլեն Կիրակոսյան:

Մարդկային ձայնի ջերմ ելևէջներին հաջորդեցին լարային գործիքների հնչյունները: Ֆելիքս Մենդելսոնի տաղանդաշատ քրոջ՝ Ֆաննի Մենդելսոն-Հենզելի Մի-բեմոլ մաժոր լարային Կվարտետի 3-րդ մասը կատարեցին բակալավրական կրթության 2-րդ կուրսի ուսանողուհիներ Շուշաննա Պուչինյանը (առաջին ջութակ), Մերի Մարգարյանը (երկրորդ ջութակ), Անի Տոնոյանը (ալտ) և Սոֆի Ստեփանյանը (թավջութակ):

Հաջորդ ստեղծագործ-կինն ունկնդիրներին տեղափոխեց Վիեննական դասական դպրոցի դարաշրջան: 3 տարեկանում կուրացած, սակայն եվրոպական երաժշտական աշխարհում համբավ և հեղինակություն ձեռք բերած երգչուհի, դաշնակահարուհի և կոմպոզիտոր Մարիա Թերեզիա ֆոն Պարադիսի գործիքների հնչյունները:

6

Լիանա Սիմոնյան

Թերեզա Նաչարյան

Շուշաննա Պուչինյան

Էլեն Պողոսյան

Մարինե Հովհաննիսյան

Շուշաննա Պուչինյան, Մերի Մարգարյան, Անի Տոնոյան, Սոֆի Ստեփանյան

Նունե Սասարյան

«ՍՏԵՂԾԱԳՈՐԾ ԿԱՆԱՅՔ»

Համերգի ունկնդիրը

5

դիսի Սիցիլիանան կատարեցին բակալավրականի 1-ին կուրսի ուսանող Ալեքսանդրա Գևորգյանը (ջութակ) և ուսումնական ասիստենտ Նունե Ասատրյանը (դաշնամուր):

Կլարա Շումանի ստեղծագործությունները մեկընդմեջ զարդարում էին համերգային ծրագիրը: Նրա օպ. 22 թիվ 3 Ռոմանսը թավջութակի և դաշնամուրի համար կատարեցին բակալավրական կրթության 2-րդ կուրսի ուսանողուհի Սոֆի Ստեփանյանը (թավջութակ) և ուսումնական ասիստենտ Ալինա Հակոբյանը (դաշնամուր):

Ռոմանտիզմի դարաշրջանի քնարական և երգային մոտիվները պարբերաբար զուգորդվում էին ժամանակակից բարդ երաժշտական լեզվով, իմպրեսիոնիստական երանգներով կամ նեոդասական երաժշտությանը հատուկ համահնչյուններով: XX դարի առաջին կեսի բրիտանացի վիրտուոզ ալտահար և կոմպոզիտոր Ռեբեկա Քլարքի ալտի Սոնատի 2-րդ մասը ներկայացրեցին բակալավրական կրթության 3-րդ կուրսի ուսանողուհիներ՝ Հեղինե Աբրահամյանը (ալտ) և Նինա Ղահրամանյանը (դաշնամուր):

Ծրագիրը շարունակվեց Բուլանժեների երաժշտական ընտանիքի քույրերի հանրաճանաչ ստեղծագործություններով: Կրտսերը տաղանդաշատ և խոստումնալից, բայց վաղամեռիկ Լիլի Բուլանժեն էր, որի Նոկտյուրնը ջութակի և դաշնամուրի համար հնչեց բակալավրական կրթության 2-րդ կուրսի ուսանողուհի Մարիա Մուրադյանի և ԵՊԿ շրջանավարտ Մերի Պետրոսյանի կատարմամբ:

Կոմպոզիտոր, դիրիժոր, դաշնակահար, երգեհոնահար և մանկավարժ Նադիա Բուլանժեն քրոջ մահվանից հետո ապրեց 7 տասնամյակ՝ մեծ ավանդ թողնելով երաժշտական աշխարհում, ղեկավարելով առաջատար նվագախմբեր, կրթելով աշխարհահռչակ կոմպոզիտորների և դիրիժորների մի ամբողջ աստղաբույլ:

Ն. Բուլանժեի 3 պիեսները թավջութակի և դաշնամուրի համար կատարեցին բակալավրական կրթության 3-րդ կուրսի ուսանողուհի Էլեն Պողոսյանը (թավջութակ) և 4-րդ կուրսի ուսանողուհի Դիբա Փիլդադին (դաշնամուր):

Գեղունի Չթյանի ալտի և դաշնամուրի սոնատի 2-րդ մասը հնչեց ԵՊԿ ուսումնական ասիստենտ Սոնա Թուրաբյանի և բակալավրական կրթության 4-րդ կուրսի ուսանողուհի Ջարուհի Մինասյանի մեկնաբանությամբ:

Երեկոյի համերգային ծրագրում տեղ էին գտել նաև Խորհրդային Հայաստանի արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր, երաժշտագետ, դաշնակահար և մանկավարժ Գայանե Չեբոտարյանի ստեղծագործություններից մի քանիսը:

Նրա 2 պրելյուդները դաշնամուրի համար հանդիսատեսի դատին ներկայացրեց Դաշնամուրային ֆակուլտետի դասախոս, դոցենտ, միջազգային մրցույթների դափնեկիր Լիլիթ Մկրտչյանը:

Միացյալ Նահանգների ամենահայտնի և տաղանդավոր կին կոմպոզիտորներից Էմի Բիչի օպ. 23 Ռոմանսը ջութակի և դաշնամուրի համար կատարեցին բակալավրական կրթության 2-րդ կուրսի ուսանողուհի Շուշաննա Պուչինյանը և ուսումնական ասիստենտ Գայանե Ասլանյանը:

Հայ կին կոմպոզիտոր, բազմաժանր ստեղծագործությունների հեղինակ Անահիտ Կոստանյանի Պրելյուդը և Ֆուգան դաշնամուրի համար հնչեցին Դաշնամուրային ֆակուլտետի դասախոս, դոցենտ, միջազգային մրցույթների դափնեկիր Նունե Ասատրյանի կատարմամբ:

Հաջորդեցին Կլարա Շումանի երկու ստեղծագործություններ: Նրա օպ. 22 թիվ 2 Ռոմանսը ջութակի և դաշնամուրի համար կատարեցին բակալավրական կրթության 3-րդ կուրսի ուսանողուհիներ՝ Մարիամ Դավթյանը (ջութակ) և Սիլվի Հովհաննիսյանը (դաշնամուր): Ապա հնչեց օպ. 17 Դաշնամուրային տրիոյի 3-րդ մասը, որը կատարեցին կոնսերվատորիայի ուսումնական ասիստենտ, միջազգային մրցույթների դափնեկիր Կարինե Հովհաննիսյանը (դաշնամուր), Թերեզա Նաչարյանը (ջութակ) և բակալավրական կրթության 2-րդ կուրսի ուսանողուհի Սոֆի Ստեփանյանը (թավջութակ):

Երաժշտական ծրագրի տպավորիչ եզրափակումը դարձավ Գայանե Չեբոտարյանի Դաշնամուրային տրիոն, որը կատարեցին բակալավրական կրթության 3-րդ կուրսի ուսանողուհի Սիլվի Հովհաննիսյանը (դաշնամուր), 2-րդ կուրսի ուսանողուհի Մերի Մարգարյանը (ջութակ) և 3-րդ կուրսի ուսանողուհի Էլեն Պողոսյանը (թավջութակ):

Համերգը վարում էր երաժշտագիտության բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի Մարինե Հովհաննիսյանը՝ հանդիսատեսի առջև բացելով կին կոմպոզիտորների աշխարհը:

Հագեցած ծրագիրն ունկնդրելուց հետո ներկաները չշտապեցին հեռանալ դահլիճից: Ցուցահանդեսի նկարների ուսումնասիրումը, ջերմ մշակութային մթնոլորտում զրույցն ու քննարկումն ամբողջացրեցին գարնանային գեղեցիկ երեկոն: «Ստեղծագործ կանայք» նախագիծն էլ թողեց նորանոր բազմապիսի միջոցառումների ուրախալի սպասումներ:

ՀԱՍՄԻԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
երաժշտագետ, ԵՊԿ դասախոս,
Նվագախմբային ֆակուլտետի աշխատակից
Լուսանկարները՝
Անանա Մալունի Սարգսյանի

ԵՐԱԺԻՇՏՆԵՐԻ ՀՈԲԻՆ

Ալվարդ Բաղդասարյան

Լեռնաշխարհիս պես համառ եմ
Արժանապատիվ անկոտրուն հայ եմ
Արմատակիր լեռնաշխարհիս
Կերտվածքն եմ Իշխանասարիս:
Ծննդավայրիս անչափ հակված
Սպարապետի պես կայուն կանգնած
Նժդեհյան մտքով ծնված-սնված
Հայուհի եմ Զանգեզուրյան ոգով կերտված:

ՄԵՂԵԴԻ ԲՆՈՒԹՅԱՆ

Այգաբացին դյութալի
Արտերն են ծփում հաճելի
Շրշյունի ձայնն է հնչում
Լորերն են կամաց փախչում
Ծփանքի ծոցում կորչում
Ուժգին քամին է փչում:
Խրոխտ մեղեդին է հյուսվում
Քաջ անսասան հպարտ
Կարծես զինվորն է քայլում անպարտ:
Փայտփորիկն է կտցում
Թմբուկի ձայնն է լսվում
Բնության հրաշք գրկում
Մորզեյի այբուբեն ստեղծում:
Հանկարծ ծղրիդն է երգում
Թևերի հպումի շրշյուն,
Կարծես ջութակի լարերն են
Մեղեդի ստեղծելով մրցում:
Ծառերն են խշշում
Ելևէջներից մեղեդի հյուսում
Լսելիքիդ հետ խոսում
Եղեգն է զեփյուռից ճոճվում:
Օրորվելով խոնարհվում
Այդ քնքույշ մեղմիկ շարժումից
Մեղեդին է ծնվում,
Մեղեդին վեհ է աննյութեղ
Քնքուշ զգացմունք է շքեղ
Ազդում է զգայարաններին
Պարգևում զմայլություն երկնային:

ԱԼՎԱՐԴ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ (ԱՌԱՔԵԼՅԱՆ)
Մանկավարժ

Հայ կոմպոզիտորական արվեստի ամենամյա փառատոնը մշակութային մեծ ու անփոխարինելի երևույթ է

Հայ կոմպոզիտորական արվեստի 16-րդ փառատոնի չորս երեկոներից բաղկացած հերթական համերգը կազմված էր կոմպոզիտորներ Արփինե Կալինինայի, Արթուր Ահարոնյանի և Գագիկ Հովունցի ստեղծագործություններից: Փառատոնի գլխավոր սկզբունքի համաձայն՝ ներկայացվում են ժամանակակից հայ կոմպոզիտորների դասական ստեղծագործությունների բացառիկ կատարումներ, որոնց մեծ մասը համաշխարհային պրեմիերաներ են: Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանի կողմից 2010 թվականին հիմնադրված փառատոնը ամենամյա է, որին մշտապես աջակցում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը: 2022 թվականից սկսած այն անցկացվում է նաև Հայաստանի կոմպոզիտորների միության հետ համատեղ: Իր առանձնահատուկ, անկրկնելի ձևաչափով այն երևույթ է հայ երաժշտամշակութային կյանքում: Գործնականորեն փառատոնը գրեթե միակ հարթակն է, որտեղ դասական երաժշտության ժամանակակից հայաստանյան և աշխարհասփյուռ հայ կոմպոզիտորները, ինչպես նաև ակադեմիական երաժշտության բոլոր ժանրերի երաժիշտները ներկայացնում են իրենց առաջին կատարումները կամ իրականացնում են իրենց մասնագիտական կյանքի առաջին բեմելը:

Փառատոնն իր բնույթով մեծամասամբ երիտասարդական է, սակայն բազմաթիվ են այն ստեղծագործությունները, որոնց հեղինակները նույնիսկ կյանքից հեռացել են, բայց հանգամանքների բերմամբ՝ իրենց ստեղծագործություններն առաջին անգամ հնարավորություն են ստանում հնչելու փառատոնի ընթացքում: Փառատոնի շրջանակներում մեծ ծավալ են կազմում նաև առաջին գործերի կամ երբևէ չկատարված գործերի ձայնագրումները, տեսագրությունները և թվայնացումը, որը հնարավորություն է տալիս ոչ միայն որպես համերգ ներկայացնել նոր ժամանակների երաժիշտներին, այլ ժամանակի մոռացությունից փրկում է բազմաթիվ գործեր, որոնք մեծամասամբ իրապես տաղանդավոր աշխատանքներ են, բայց անպատեհ հանգամանքների բերումով՝ երաժշտի կամ, որպես կանոն, նվիրյալ մի արվեստագետի կյանքի օրոք դրանք չեն հնչել, և կամ թե հնչել են քիչ կամ հեղինակի պատկերացրած ոչ լիարժեք ձևաչափով: Այս փառատոնի մասնագիտական մեծագույն սկզբունքներից մեկն է՝ գրված երաժշտությունը ներկայացնել այնպես, որ այն մնա ժամանակի մեջ, որպես արվեստագետի ստեղծագործական դեմք: Այդ ծրագիրը պատշաճ մակարդակով իրականացնելու համար՝ բոլոր համերգները տեսագրվում են, ձայնագրվում են, իսկ շատ ավելի մեծ ծավալի, թվաքանակի և տարաբնույթ ստեղծագործություններ ձայնագրվում են մասնագիտացված բարձրակարգ ստուդիաներում, թվայնացվում են և պահպանվում են ամեն տարի հարստացող և ամեն տարի ավելի անփոխարինելի ու բացառիկ դարձող ֆոնդում: Փետրվարի 17-ին, Արամ Խաչատրյան համերգասրահում կայացած համերգի ավարտին հնչեց վաստակաշատ երաժիշտ, կոմպոզիտոր, Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի բազում տասնամյակների դասախոս, պրոֆեսոր, ՀՀ Արվեստի վաստակավոր գործիչ Գագիկ Հովունցի դաշնամուրի Կոնցերտը (երկ 16): Այն նվիրում է Սվետլանա Նավասարդյանին, քանի որ հնչել է մեկ անգամ՝ տաղանդավոր դաշնակահարուհու կատարմամբ: Եվ այս փառատոնի ժամանակ Կոնցերտն արդեն հնչում էր որպես կոմպոզիտորի գործի հետմահու կատարում, ընդհանուր մեծ համերգային երեկոյի ընթացքում, ֆրանսահայ տաղանդավոր դաշնակահար Ժան-Պոլ Գասպարյանի հրաշալի կատարմամբ և երեք կոմպոզիտորների բազմաժանր ստեղծագործություններից կազմված համերգի հայտնի դիրիժոր Ալեքսանդր Հումալայի ընդհանուր ղեկավարությամբ: Ի տարբերություն առաջին կատարման, այս կատարումը տեսագրվում, ձայնագրվում և պահպանվում է: Շեշտենք, որ ամբողջ երեկոն հարգանքի տուրք էր և նվիրված էր Գագիկ Հովունցի ծննդյան 95-ամյակին: Համերգի երեք հեղինակների գործերն էլ գրված էին սիմֆոնիկ նվագախմբի համատեղ կատարման համար, որը, ինչպես միշտ ամենաբարձրակարգ կատարողական աստիճանով ներկայացնում էր Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը՝ Ալեքսանդր Հումալայի բարձրարվեստ ղեկավարությամբ: Ինչ վերաբերում է դիրիժորներին, ապա այս հարցում ևս մի անփոխարինելի սկզբունք կա. այն է, որ սովորաբար դիրիժորները հյուրախաղերի մեկնում են իրենց տիրապետած գործի ինքնուրույն ղեկավարությամբ, իսկ ՀԿԱՓ շրջանակում գերազանցապես բոլոր գործերն առաջին կատարումներ են և «զրոյական վիճակից» իրականացված իրագործումներ են: Համերգային երեկոյում ներկայացված առաջին հեղինակը կոմպոզիտոր, դաշնակահար, երաժշտամանկավարժ, կոնսերվատորիայի կոմպոզիցիայի դասախոս, միջազգային բազում մրցույթների մրցանակակիր, Ռուսաստանի արվեստի բարձրագույն նվաճումների համար շնորհվող

Ժան Պոլ Գասպարյան (դաշնամուր),
Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը՝ Ալեքսանդր Հումալայի ղեկավարությամբ

հեղինակավոր «Տրիումֆ» մրցանակակիր կոմպոզիտոր Արփինե Կալինինան էր, որը նախաձեռնել, կազմակերպել և ղեկավարել է «Կամուրջ» ձևաչափի միջմշակութային երաժշտական ծրագրեր՝ «Հայ-Գերմանական երաժշտական կամուրջ» (Քյոլն 2024), «Բրիտանական և Հայկական Երաժշտական Կամուրջ» (2017-2025 ընթացող), 2007-ից հիմնադրել և մինչև 2021-ը ղեկավարել է հայ դասական երաժշտության «Կանթեղ» նվագախումբը որպես գեղարվեստական ղեկավար և դաշնակահար, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի սան է և Լոնդոնի Երաժշտական թագավորական ակադեմիայի մագիստրոս, Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության անդամ: Արփինե Կալինինայի հեղինակած գործը՝ «Սրտի անհամբերությունը» սոպրանոյի, ջութակի, թավջութակի և սիմֆոնիկ նվագախմբի համար, ըստ Ստեֆան Ցվայգի վեպի է: Բանաստեղծական խոսքը Եղիշե Չարենցինն է և ստեղծագործության կատարումը հերթական համաշխարհային պրեմիերա էր: Մենակատարներ՝ Սոֆյա Սայադյան (սոպրանո), Էրիկ Մանուկյան (ջութակ), Սիփան Թորոսյան (թավջութակ): Համերգային երեկոյի երկրորդ հատվածում հնչեց հաջորդ համաշխարհային պրեմիերան՝ ֆրանսահայ կոմպոզիտոր, Եվրոպայում հայտնի դաշնակահար, Փարիզի Դարիուս Միյոյի անվան կոնսերվատորիայի պրոֆեսոր (2002 թվականից), Պիեռ Լանտյեի անվան միջազգային փառատոնի առաջին մրցանակակիր, Անտիբի Համաշխարհային փառատոնի հաղթող, գործնականում անթվարկելի փառատոնների մասնակից և բազմաթիվ մենահամերգների մենակատար դաշնակահար, դասական երաժշտության ամենատարբեր ժանրերի, առանձնապես ծավալուն սիմֆոնիկ ստեղծագործությունների հեղինակ, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորայի դաշնամուրային և կոմպոզիտորական բաժինների շրջանավարտ (Էդուարդ Բաղդասարյանի, այնուհետև՝ Տիգրան Մանսուրյանի դասարան), ապա ասպիրանտ, պրոֆեսոր, Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ Արթուր Ահարոնյանի նոր ստեղծագործությունը: 1993 թվականից նա հաստատվել է Փարիզում, 1995 թվականին Սորբոնի համալսարանի երաժշտագիտական բաժնում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Կոմիտասի դաշնամուրային ստեղծագործությունը» աշխատությունով: Կոմիտասի ստեղծագործությունների կատարումով *Megadisc Classics*-ի թողարկած նրա վերջին ձայնասկավառակն արժանացել է Վիեննայի ռադիոյի մրցանակին: Երևանյան համերգային երեկոյի երկրորդ մասում հնչեց Արթուր Ահարոնյանի «Տուն արի» պիեսները՝ սոպրանոյի և սիմֆոնիկ նվագախմբի համար: Ստեղծագործությունը նվիրված է Արփի և Վաչե Պարսումյաններին: Պիեսները գրված են Մետաքսեի բանաստեղծությունների հիման վրա՝ «Ես ու Դու», «Գնալուց առաջ», «Հիշիր ինձ», «Տուն արի»: Երևանում իր առաջին համերգային կատարումով հրաշալի հանդես եկավ, ԱՄՆ-ում բնակվող ամերիկահայ սոպրանո Շուշիկ Պարսումյանը: Ինքնատիպ, փոքր ձևի մեջ, բայց մոնումենտալ հնչողությամբ ստեղծագործությունը և երգչուհու փայլուն կատարումը ևս արժանացավ երևանյան հանդիսատեսի ջերմ ընդունելությանը: Մեկ անգամ ևս հաստատում ենք, որ Հայ կոմպոզիտորական արվեստի ամենամյա փառատոնը մշակութային մեծ ու անփոխարինելի երևույթ է: Պատշաճ ամենաբարձր գնահատանքի է արժանի փառատոնի նախաձեռնող և մշտական մասնակից Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը՝ գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանի գեղարվեստական ղեկավարությամբ:



ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ
https://www.aravot.am/2025/02/20/1471166/

ՀՈՒՇԵՐ ՎԻԼԼԻ ՄՈԿԱՑՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, լարային ամբիոնի ղեկավար Վիլլի Հովհաննեսի Մոկացյանը մի բացառիկ երաժիշտ էր՝ ջութակահար: Նրա անունը թնդում էր ամբողջ երաժշտական աշխարհով: Մեծանուն ջութակահարն ուներ մի հզոր ջութակի դասարան և մեծ պատիվ էր նրա դասարանում սովորելը: Կոնսերվատորիայում ասում էին «Մոկացյանի դասարան», արդեն մեծ հեղինակություն էր նշանակում:

Ինձ մեծ պատիվ է ընձեռվել աշխատել այդ հանրահայտ երաժշտի հետ, իր ամբիոնում: Նրա խստաբարո վերաբերմունքը մեծ ակնածանքի է արժանի: Բացառիկ մի անհատականություն էր: Ամեն կիսամյակի քննությանը մեծ հուզմունքով էի լցվում և սպասում նրա գնահատականին և մեծ էր լինում ուրախությունս, երբ չէր դժգոհում: Վիլլի Հովհաննեսին զուսպ և չարտահայտվող էր, խստապահանջ երաժիշտ էր և ազնվագույն անձնավորություն:

1990-ական թվականներին, ձմռանը կոնսերվատորիան ցրտի պատճառով փակվում էր, և շատերը «քննություն» չէին նվագում, իսկ Վիլլի Մոկացյանը գալիս էր իմ տավիղի դասարանի քննություններն ընդունելու իմ տանը, քանի որ տավիղ ոչ բոլոր ուսանողներն ունեին:

Հիշում եմ, որ առաջին տարին հրավիրեցի Մատենադարանի մոտ ապրող ուսանողուհուս՝ Օլգա Լագունովայի տուն, քանի որ մոտ էր կոնսերվատորիային: Երկրորդ տարին ծնողներիս տուն հրավիրեցի, որտեղ ուսանողներս իմ տավիղով էին նվագում: Լիլյա Հովհաննիսյանը նվագում է Վ. Ա. Մոցարտի Կոնցերտը՝ գրված տավիղի և ֆլեյտայի համար, որտեղ ֆլեյտան նվագում էր կոնսերվատորիայի ուսանող Կարենը: Վիլլի Մոկացյանը հարցրեց Կարենին, թե այն մյուս ծյուղով պարապո՞ւմ է, որին Կարենը պատասխանեց՝ այո, ինչին ի պատասխան Վիլլի Մոկացյանից օրհնություն ստացավ: Այդ ֆլեյտահար ուսանողը, այժմ Ա. Սպենդիարյանի անվան օպերային թատրոնի գլխավոր դիրիժոր՝ Կարեն Դուրգարյանն է:

Երրորդ տարում քննությունն ամուսնուս հայրական տանն էր, քննության ավարտից հետո, քաղցրավենիքով սեղանի շուրջ Վիլլի Մոկացյանը բաժակ բարձրացրեց և ամուսնուս ասաց՝ *«Բախտավոր մարդ ես, որ այսպիսի կին ունես»:* Ես չէի հավատում ականջներիս, մի թե՞ գոհ էր ինձանից՝ հրաշք: Հետո ամբիոնի իմ աննման ղեկավարին, ով արդեն ինսուլտ էր տարել, քննության էր բերել Ստեփան Լուսիկյանը՝ ծառայողական մեքենայով: Քննության ավարտին օգնեցի նրան տեղավորվել մեքենայում, իսկ ուսանողուհիս՝ Արմինե Իսրայելյանն ուղեկցեց նրան տուն: Ձմեռ էր, շատ ձյունառատ էր:

Հիշում եմ, այն մի տարին, պետական ավարտական քննությանը՝ երկու ուսանող ունեի ավարտող՝ Լիլիան և Ռուզաննան: Քննությունից հետո Վիլլի Մոկացյանն ինձ ասաց, որ հանձնաժողովին ասել է, որ պետք է գնահատել դասախոսի աշխատանքը և երկու ուսանողներին էլ գերազանց է պետք գնահատել: Անսահման մեծ էր իմ երջանկությունը, որ ստացա այդպիսի գնահատական իմ հնգամյա աշխատանքի մասին: Իսկ երբ կոնսերվատորիան ավարտում էր 4-րդ կուրսի՝ իմ ուսանողուհի Արմինե Իսրայելյանը, պետական քննությունից հետո Վիլլի Մոկացյանը մոտեցավ մեզ և հարցրեց Արմինեին, թե ինչ էր պատահել, որ այդքան լավ նվագեց: Ես շատ ուրախ էի:

Մեծագույն սիրով և հարգանքով եմ հիշում ամբիոնի իմ աննման ղեկավարին, բացառիկ երաժիշտ էր ու հրաշալի մարդ:

1994 թվականի գարնանը, երբ կոնսերվատորիան բացվեց, Արամ Շամշյանը, ով այդ ժամանակ նվագախմբային ֆակուլտետի դեկանն էր, ասաց, որ Վիլլիկը ինձ ներկայացրել է դոցենտի պաշտոնում, խորհուրդը հաստատել է: Ես ապշեցի, Վիլլի Մոկացյա՞նը, ի՞նձ, երեսուն երեք ամյա դասախոսի՞: Ինձ ոչինչ չէր ասել: Մի քանի ամիս անց, երբ հանդիպեցի նրան, ասացի, որ անչափ շնորհակալ եմ, այդ մեծագույն գնահատականի և օգնության համար, նա հրաժարվեց, ասելով, թե նման բան չկա: Ես մոլորվեցի, շփոթվեցի, այնքան լարված էի նրա հետ խոսելիս: Լարվածությունս տեսնելով շրջվեց դեպի ինձ ու ժպտաց: Ես շնչեցի, այսինքն ինքն էր եղել: Այդպես էլ թույլ չտվեց որ շնորհակալության և երախտիքի խոսքեր ասեմ իրեն:

Մեկ օր, կոնսերվատորիայի աստիճանների մոտ հանդիպեցի Վիլլի Հովհաննեսին, պատմեց, որ Լորիս Ճգնավորյանը ցանկացել է իր ծննդյան 60-ամյակը նշել ֆիլհարմոնիայում, բայց նա հրաժարվել է:

Վիլլի Մոկացյանի հոգեհանգստի արարողության ժամանակ, որը տեղի էր ունենում ֆիլհարմոնիայում, իմ թևին էլ կապեցի սև ժապավեն և կանգնեցի պատվո գինվոր: Արցունքները գլուլ-գլուլ հոսում էին այտերից:

Սիրելի Վիլլի Մոկացյանի հիշատակը հավերժ կմնա իմ հոգում: Նա ազնվագույն մարդ էր և տաղանդավոր երաժիշտ: Թող լույսերի մեջ մնա նրա հոգին:

ԳԱՅԱՆԵ ՄՆԱՑԱԿԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԵՊԿ Տավիղի դասարանի պրոֆեսոր

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՓԱՍՏ

Համաշխարհային պատմության մեջ որ թագավորն է ամենաշատը եղել եվրոպացի աշխարհահռչակ կոմպոզիտորների կողմից գրված օպերաների թեման:

Զարմանալիորեն այս թագավորը հայոց թագավոր Տիգրան Մեծն էր, ով կառավարել է Ք.Ծ.ա. 95-55 թթ. Նրան են նվիրել 23 օպերաներ, որոնք գրվել են եվրոպացի ամենահայտնի (հատկապես իտալացի) կոմպոզիտորների կողմից: Ստորև ներկայացնում ենք աշխարհահռչակ եվրոպացի կոմպոզիտորների անունները, ովքեր ստեղծել են օպերաներ Հին Հայաստանի թագավորի մասին.

1. A. Scarlatti – "Tigran the Great, (Italian), 2. N. Piccini – "Tigran the Great", (Italian), 3. T. Albinoni – "Tigran the Great – King of Armenia", (Italian), 4. M. Bononcini – "Tigran the Great – King of Armenia", (Italian), 5. N. Righini – "Tigran the Great", (Italian), 6. P. Lambuniani – "Tigran the Great", (Italian), 7. F. Gasparini, F. Conti, Z. Morlondi – "Tigran the Great", (German), 8. I. Hasse – "Tigran the Great", (Italian), 9. G. Arena – "Tigran", (Italian), 10. L. Santos – "Tigran", (Italian), 11. G. Paganeli – "Tigran the Great", (German), 12. K. Gluck – "Tigran", (Italian), 13. P. Gulielmi – "Tigran the Great", (Italian), 14. G. Golla – "Tigran", (Italian), 15. A. Tozzi – "Tigran", (Italian), 16. I. Seloniat – "Tigran", (Italian), 17. D. Scarlatti – "Tigran the Great or Pompey in Armenia", (Italian), 18. G. Saotti – "Tigran", (Italian), 19. P. Bernardoni – "Tigran", (Italian), 20. G. Handel – "Tigran the Great", (German), 21. A. Artamonov – "Tigran the Great" (Russian), 22. Hots – "Tigran the Great", (German), 23. A. Vivaldi, B. Micheli, N. Romaldi – "Virtue Triumphing Over Love and Hate, or Tigran", (Italian):

ՉԵԽԻԱ

ՀԱՅ ՄԵՆԵՐԳՉՈՒՀԻ ՃՈՒԼԻԱՆԱ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ ԵՒ ԱՆՈՒԱՆԻ ՄՈՆՂՈԼ ՊԱՐԻԹՈՆ ԱՄԱՐԹՈՒՎՇԻՆ ԷՆԽՊԱԹԻ ՀՐԱՇԱԼԻ ՀԱՄԵՐԳԸ

Փետրուար 28-ին, Փրակայի քաղաքապետարանի «Սմեթանա» դահլիճին մէջ տեղի ունեցած է հայ տաղանդաւոր մեներգչուհի Ճուլիանա Գրիգորեանի եւ անուանի մոնղոլ պարիթոն Ամարթուվշին Էնխպաթի հրաշալի համերգը, Փրակայի Ֆիլհարմոնիք նուագախումբի ընկերակցութեամբ:

Մենակատարութիւններով եւ զուգերգերով հընչած են արիաներ՝ իտալական յայտնի օփերաներէն, իսկ Ճուլիանա Գրիգորեան կատարած է նաեւ անուանի չեխ երաժիշտ Անթոնէն Տվորժաքի արիան՝ «Ջրահարս» օփերայէն, որ յուզած է հանդիսականները:

Համերգի աւարտին, ներկաներու փափաքին ընդառաջելով, մեներգչուհին ա գափելլա երգած է Սուրբ Գրիգոր Նարեկացիի «Հաւուն, Հաւուն» տաղը:

Մեներգիչները արժանացած են ներկաներու երկարատեւ ծափահարութիւններուն:

Նշենք, թէ համերգը տեղի ունեցած է Nachtigall Artists Management-ի համագործակցութեամբ եւ Հայաստանի դեսպան Աշոտ Յովակիմեանի պատուոյ հովանաւորութեամբ:

Լուսանկարը՝ Petr Dyrc-ի ■

Նաեւ Հայաստանի մշակոյթի եւ կրօնի մասին պատմող տեսանիւթ մը:

Այցելուները առիթ ունեցած են համտեսելու նաեւ հայկական գաթան եւ մասնակցելու Հայաստանի պատմութեան եւ աշխարհագրութեան մասին հանելուկախաղի (quiz) մը: ■

ԶԱՆԳԵԶՈՒՐՍ

Զանգեզուրս Հայաստանիս կանգուն սյունն է,
Քարի ձեղքից ձուլված թուրն է,
Եթե փորձեն մոտենան
Կուրացած ետ կդառնան:

Զանգեզուրս լեռնաշխարհիս անպարտ դուռն է,
Հպարտ մարդկանց սարքած տունն է,
Համարձակվեն ներխուժեն
Ետ դարձի ճամփա էլ չունեն:

Զանգեզուրցու մոգական ուժը անմար է,
Անվախ քաջի վահանն են
Տղամարդ, կին, ծեր, երեխա,
Լեռներիս պես հպարտ են,
Աստծո կամքով անպարտ են:

ՀԱՅՐԵՆԻՔՍ ԻՆՁ ԿԱՆՉՈՒՄ Է

Երանի նրան, ով կարողանում
Օտար ափերում հանգրվանում է
Ու հանգիստ ապրում,
Եվ չի տառապում կարոտի տենչով
Իր Հայրենիքի մոգական կանչով:

Օտար ափերում հոգիս է ցավում,
Օտարությունում հոգով չես սնվում,
Օտար ափերում հայերեն լեզվով
Բարի լույս չկա
Բարևդ էլ հայերեն չկա:

Ես ուզում եմ, որ
Հայերեն լեզվով բարի լույս լսել,
Բարևս էլ հայերեն ասել,
Հայկական լեզվի կարոտ չքաշել
Եվ Կոմիտասյան հորովել լսել:

ԱԼՎԱՐԴ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ (ԱՌԱՔԵԼՅԱՆ)
Մանկավարժ

ՄԱՐՏ 2, 2025 ԿԱՅՔԱՐ Հայրենիք Էջ 9

ՀԻՒՍԹԸՆԵԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ԵՊԵՐԻ ԱՍՏՂԵՐՈՒՆ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ՄԸ

ՅՈՎՍԷՓ ՄԵԼՔՈՆԵԱՆ

Թէքսաս նահանգի Հիւսթըն քաղաքը համա-ամերիկեան չափանիշով տնտեսական, գիտական եւ ֆինանսական կեդրոն մըն է, ու մասնաւորապէս կը փայլի իր համաշխարհային վարկ վայելող ծաւալուն եւ բազմաշերտ բժշկական խնամքի եւ հետազօտութեան կառոյցներով, քարիւղի մարզով, ինչպէս նաեւ Անջրպետի Հետազօտութեան սահմանուած Ազգային Գործակալութեան (NASA) ներկայութեամբ: Իր անմիջական արուարձաններով 5 միլիոնի հասնող եւ ծնունդով բազմազգ բնակչութեամբ յատկանշուող եռուն համայնքային կեանք մը ունի, ու կը հանդիսանայ Ամերիկայի Միացեալ Նահանգներու մեծագոյն քաղաքներէն չորրորդը՝ Նիւ Եորքէն, Լոս Անճելըսէն եւ Շիքակոյէն ետք:

Հիւսթըն քաղաքը երկրի լայն հասարակութենէն նուազ ծանօթ է, սակայն իր գեղարուեստի, թանգարանային, համերգասրահային, եւ պատկերասրահային հաստատութիւններու ցանցով կամ նուաճումներով: Թէեւ այդ մարզերէն ներս չի վայելեր կարգ մը ամերիկեան քաղաքներու հանրածանաչողութիւնը, այսուհանդերձ անոր մշակութային հաստատութիւններու գանձերն ու հարստութիւնը անոր կը պարգեւեն «շնորհալի»ի մը պսակը: Արդարեւ, Հիւսթընի Գեղարուեստի Թանգարանի (Museum of Fine Arts of Houston), Ռիէնզի թանգարանի (Rienzi Museum), կամ Մենիլ Պատկերասրահի (The Menil Collection) հաւաքածոները եւ կամ վերացական գեղանկարիչ Մարք Ռոթքոյի (Mark Rothko) պաստառները պարփակող եւ ոչ-յարանուանական հակում ունեցող խոկումի մատուռը համաշխարհային գեղարուեստի աշխարհէն ներս նշանակալից աւանդ մը կը ներկայացնեն:

Ընդհանրապէս անծանօթ մնացած այդ «շնորհալիութեան» մաս կը կազմէ Հիւսթընի Օփերան, որուն տարեկան ձեռնարկները եւ ստեղծագործական նուաճումները ամէն տարի առինքնող անակնկալ մը կը պարգեւեն երգարուեստի այդ սեռի սիրահարներուն տասնամեակներէ ի վեր:

Հիւսթընի Օփերան կը յատկանշուի մանաւանդ երիտասարդ եւ շնորհալի երգիչ-երգչուհիներու տաղանդի ծաղկումին եւ զարգացումին ստեղծող Butler Studio-ի ծրագրեալ գործունէութեամբ: 1977 թուականին հաստատուած այս արուեստանոցը ամէն տարի աշխարհի չորս ծագերէն երգարուեստի մարզէն ներս յայտնուող 8-էն մինչեւ 12 երկսեռ տաղանդներ կ՚ընտրէ անոնց ընծայելով իրենց արուեստը կատարելագործելու հնարաւորութիւնը, եւ Հիւսթընի Օփերային ստեղծագործական արտադրութիւններու ընդմէջէն ձեռք բերելու իրենց անհրաժեշտ բեմական փորձառութիւնը:

Այս վերջին տասնամեակին Հիւսթընի Օփերայի այս կատարելագործական ծրագրին մաս կազմած են հայրենածին շնորհալի դիմեր: Այս ընտրուած տաղանդներու առաջիններէն մին եղաւ Հայաստանէն սոփրանօ Մանէ Կալոյեան, որ մաս կազմելէ ետք այս արուեստանոցի ծրագրային աշխատանքներուն 2014-2016 տարեշրջաններուն, այժմ կը գործէ օփերայի լայն աշխարհէն ներս բեմ ելլելով կարեւոր դերերով Շիքակոյի Լիրիք, Լոնտոնի Արքայական, Նիւ Եորքի Մեթրոփոլիթէն, Պեռլինի, Վիեննայի եւ անոնց նման օփերային հիմնարկներու կազմէն:

Այս նոյն ծրագրին մէջ 2023-2025 տարեշրջաններուն ընդգրկուած են նաեւ երկու հայ երիտասարդներ յանձինս՝ Մեցցո-Սոփրանօ Անի Քուշեանի (Թիֆլիսէն) եւ Պարիթոն Նաւասարդ Յակոբեանի (Երեւանէն): Երկուքն ալ այս ծրագրին մաս կազմելէ առաջ երաժշտական բարձրագոյն կրթութիւն ստացած են իրենց ծննդավայրերու երաժշտական հաստատութիւններէն ներս որակաւոր ուսուցիչներու խնամքին ներքեւ եւ շահած են մրցանակներ՝ կատարողական արուեստի իրենց նախաքայլերու ընթացքին:

Անցնող երկու տարիներուն Անի Քուշեան եւ Նաւասարդ Յակոբեան Հիւսթընի Օփերայի արուեստանոցի աշխատանքներուն կողքին կարեւոր եւ նշանակալից դերեր վերցուցած են ծրագրուած բեմադրութիւններուն մէջ: Անի Քուշեան ծրագրի առաջին տարւոյն ընթացքին բեմ ելած է Վակնէրի Բարսիվալ (Parsival) օփերային մէջ զոյգ դերերով, մասնակցած է Ռախմանինովի ծննդեան 150-ամեակին նուիրուած եւ Քարնէկի սրահին (Carnegie Hall) մէջ կազմակերպուած երգահանդէսին եւ շահած է Մեթրոփոլիթընի Օփերայի Ճէորճիա նահանգային շրջանի 2024 թուականի Լաֆոնթ Մրցոյթի (Dominique Laffont Competition) առաջնութիւնը: Իր կարգին Նաւասարդ Յակոբեան նուաճած է Տալաս Օփերայի Ազգային ձայնական երաժշտութեան առաջին մրցանակը, Նիւ Եորքի Մեթրոփոլիթընի Օփերայի Լաֆոնթ Մրցոյթի առաջնութիւնը, երրորդ հանդիսացած է 2023 թուականին կայացած Բլասիտօ Տոմինկոյի Operalia World Opera Competition մրցոյթին՝ եւ շահած անոր Ferrer Prize of Zarzuela-ն մրցանակը : Թէ՛ Անի Քուշեան եւ թէ՛ Նաւասարդ Յակոբեան միաժամանակ մասնակցած են Ամերիկեան եւ Եւրոպական զանազան երկիրներու մէջ կայացած եւ վարկանիշ ունեցող երգահանդէսներու եւ ելոյթներու արժանանալով գնահատանքներու:

Հիւսթընի Օփերայի այս ծրագրային շրջանի իրենց մասնակցութեան աւարտին Անի Քուշեան եւ Նաւասարդ Յակոբեան Հիւսթընի Սբ. Գէորգ Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Արժ. Տէր Մարտիրոս քհնյ. Յակոբեանի հրաւէրով եւ Եկեղեցւոյ Հոգաբարձութեան կազմակերպութեամբ բարձրորակ երգահանդէս մը հրամցուցին տեղւոյն հայ գաղութին «Melodies of Grace» խորագրով Կիրակի, 16 Փետրուար 2025 թուականին՝ տեղւոյն Հայ Կեդրոնի Հէքիմեան սրահին մէջ կոկիկ բազմութեան մը ներկայութեան: Յայտագիրը կ՚ընդգրկէր հայ եւ օտար երգահաններու գործեր որպիսին էին Կոմիտաս *(Ծիրանի Ծառ, Կանչէ Կռունկ)*, Ալեքսան Սպենդիարեան *(Այ Վարդ)*, Արմէն Տիգրանեան *(Անոյշ օփերայի «Ուռին»)* եւ Էտկար Յովհաննէսեան *(Էրէբունի Երեւան)*: Երգացանկի օտար հեղինակներէն թուենք P. Tosti, S. Gastaldon, F. Torroba, G. Bizet առանց մոռնալու Վրացական ժողովրդային սիրային երգի մատուցումը որ Անի Քուշեանի երգացանկի մնայուն նմոյշներէն մին կը հանդիսանայ: Երկու արուեստագէտներուն դաշնամուրի վրայ կ՚ընկերակցէր հանրածանօթ դաշնակահար William Woodard:

Նաւասարդ Յակոբեան եւ Անի Քուշեան գրեթէ մէկ ժամ տեւող այս երգահանդէսին ի յայտ բերին իրենց կատարողական արուեստի հարուստ երանգները, զգայնութիւնն ու բեմական ներկայութեան տպաւորիչ մակարդակն ու որակը: Անի Քուշեանի վրացական ժողովրդային երգի քնքշութիւնը կը հակադրուէր անոր Ֆրանսացի երգահան Ճորճ Պիզէի «Գարմէն» օփերայի «Հապաներային» ուր խրոխտ, ըմբոստ, եւ անկաշկանդ գնչու աղջիկը ազատ սիրոյ իր հաւատամքը կ՚երկնէր տպաւորիչ ելոյթով: Քուշեան այդ կերպարը ստեղծած էր Հիւսթընի Օփերայի բեմին վրայ անցեալ Մեպտեմբերին արժանանալով գնահատանքի եւ Հէքիմեան սրահի իր ելոյթը լիովին արդարացուց այդ գնահատանքները:

Իր կարգին Նաւասարդ Յակոբեանի ջերմ եւ բնածին հարուստ ձայնային յատկութիւնները երեւան եկան թէ՛ հայ եւ թէ՛ օտար երգահաններէ ընտրած երգացանկի կատարումով: Յակոբեան բեմական ուժեղ եւ տպաւորիչ ներկայութիւն մըն է որուն երաժշտական մեկնաբանութիւնը հոգի եւ սիրտ կը ջերմացնէ իր ազնուական մօտեցումով եւ խորքով:

Այս երկու արուեստագէտներու ելոյթը յատկանշուեցաւ նաեւ գեղեցիկ նախաձեռնութեամբ մը, որ պատիւ կը բերէ իրենց: Արդարեւ, ստանձնելով մենտորի (դաստիարակ, խորհրդատու) յատուկ դեր մը անոնք իրենց ելոյթին մէջ տեղ տուին գաղութի պարմանուհիներէն, ու տեղւոյն Back Junior High School յաճախող Նարէ Յակոբեանին, որ իրենց հետ ելոյթ ունենայ յայտագրէն դուրս գտնուող Sound of Music թատերական երաժշտութեան պատկանող մի քանի նմոյշներ երգելով: Նարէ իր յաճախած երկրորդական վարժարանի երգչախումբին մաս կը կազմէ ու երկու երաժիշտներու մէկ ելոյթէն խանդավառ ու ներշնչուած, անոնց հսկողութեան տակ պատրաստուած էր այս ելոյթին:

Իրենց Հիւսթընեան կատարելագործման շրջանի աւարտին Անի Քուշեան եւ Նաւասարդ Յակոբեան այս տարուան Մայիս ամսուն կը մեկնին Գերմանիա, ուր Նաւասարդ Յակոբեան աշխատանքի հրաւիրուած է Պեռլինի Օփերայի կազմէն ներս :

Երգահանդէսի աւարտին իր փակման խօսքին մէջ Արժ. Տէր Հայր Մարտիրոս Քհնյ. Յակոբեան սրահէն ներս ողջունեց ներկայութիւնը Հիւսթընի Օփերայի կարգ մը ղեկավար, բարերար, եւ երգիչ անձերու որոնք այս տպաւորիչ երաժշտական ցերեկոյթին սատար հանդիսացած էին:Շնորհակալութիւն յայտնեց երիտասարդ արուեստագէտներուն եւ անոնց դաշնամուրի ընկերակցութիւնը ապահովող William Woodard-ին այս բացառիկ երաժշտական ցերեկոյթին եւ անոնց որակաւոր մասնակցութեան համար, ու ապա ներկաները հրաւիրեց կոկիկ հիւրասիրութեան մը՝ բարի ճանապարհ մաղթելու Անի Քուշեան եւ Նաւասարդ Յակոբեան արուեստագէտներուն:

Յոյժ հպարտառիթ եւ ուրախութիւն պատճառող երեւոյթ է որ այս երիտասարդները կու գան օփերային արուեստի անդաստանէն ներս անցեալին գործած եւ տակաւին գործող հայ տաղանդաւոր արուեստագէտներու հոյլին միանալու, ամբողջացնելով եւ հարստացնելով արտասահմանեան բեմերու եւ զանազան երկիրներու մէջ յայտնի դարձած հայ դէմքերու ցանկը: Անկախ անոնցմէ որոնք հայրենի բեմերուն վրայ փայլեցան սովետական շրջանին, արտասահմանեան բեմերու վրայ երեւցած են անուններ ինչպիսին էին ու են Լուսին Ամարա, Լուիզա Պոզապալեան (ԱՄՆ), Սոնա Ղազարեան (Վիեննա, Աւստրիա), Յասմիկ Պապեան, Իզապէլ Պայրագտարեան (Գանատա եւ ԱՄՆ), Աննա Կասեան (Ֆրանսա) Յասմիկ Գրիգորեան (Լիթուանիա) եւ շատ ուրիշներ, որոնք իրենց կատարողական տաղանդով հայ արուեստին առիթ եւ միջոց ստեղծեցին ու կը ստեղծեն տակաւին, աշխարհի լայն տարածքին անոր ներկայութիւնը փաստելու եւ տարածելու: Փոքրաթիւ ժողովուրդի մը համար անկասկած զարմանք պատճառող երեւոյթ է, որ օփերայի մարզէն ներս այսքան մեծաթիւ ներկայութիւն մը ունինք: Բայց միշտ պէտք է յիշենք որ արուեստի ոեւէ ոլորտ կ՚անցնի անհատական անդուլ ջանքի, յամառ աշխատանքի եւ ամբողջական նուիրումի բովէն ու այդ բարձունքներուն ձգտող եւ հասնող անհատներուն մեր ամբողջական հիացմունքը, յարգանքն ու գնահատանքը կը պարտինք թէ՛ իբրեւ անհատներ եւ թէ՛ իբրեւ հաւաքականութիւն:

Հետեւաբար այս առիթով մեր անհատական եւ հաւաքական մաղթանքները պէտք է ուղղենք այս երիտասարդներուն: Թող Անի Քուշեան, Նաւասարդ Յակոբեան եւ անոնց նման դիմեր եւ տաղանդներ ձգտին եթերի աստղերուն տանող եւ առաջնորդող ուղիին, եւ թող այդ ճանապարհորդութիւնը ըլլայ միշտ անխաբան, յաջողութիւններով եւ նուաճումներով լի:

Հիւսթըն, 22 Փետրուար 2025

Էջ 6 ՊԱՅՔԱՐ ՄԱՐՏ 16, 2025

ԹՄՄ ԼԻԲԱՆԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

«Որքան ապրի հայկական երաժշտութիւնը, այնքան կ՚ապրի Հայաստանը»

Կոմիտաս

Այսօր ամէն ժամանակէ աւելի, մենք պէտք ունինք ազգային գիտակցութեան, յանուն մեր նորահաս սերունդին: Անոնք ականատես վկան կը հանդիսանան մեր ազգային վերիվայրումներուն, իսկ մենք ամէն ճիգ ի գործ կը դնենք մեր ազգային աւանդոյթը կարենալ ապրեցնելու համար անոնց մատղաշ հոգիներուն մէջ:

Արդարեւ, շաբաթ, 1 Մարտ 2025-ի երեկոյեան, Թէքէեան Մշակութային Միութեան Լիբանանի Տեղական Վարչութեան կազմակերպութեամբ, Վ. Թէքէեան վարժարանի Պարսամեան սրահին մէջ տեղի ունեցաւ Մեծն Կոմիտասի մահուան 90-ամեակին նուիրուած պատշաճ հանդիսութիւն:

Հոծ բազմութեամբ լեցուն սրահին մէջ ներկայ էին ոչ միայն մշակութասէր հասարակութիւն մը, այլեւ երիտասարդ սերունդի ներկայացուցիչներ, որոնք ոչ միայն եկած էին ըմբոշխնելու մեծն Կոմիտասի կեանքն ու գործունէութիւնը, այլեւ մասնակից դառնալու գեղարուեստական յայտագրին:

Բացման խօսքով հանդէս եկաւ օրդ. Մանէ Պասմաճեան, որուն ելոյթի կորիզը հանդիսացած էր երիտասարդ Կոմիտասի ծաւալած գործունէութիւնը, Պեռլին մեկնիլն ու մասնագիտական ուսում ձեռք ձգելն ու Կոստանդնուպոլսոյ մէջ առաջին անգամ ըլլալով 300 հոգիէ բաղկացած երկսեռ երգչախումբ ստեղծելը:

Գեղարուեստական յայտագրին ընդմէջէն բացառիկ կերպով Կոմիտասի «Գարուն ա»ն դաշնամուրի վրայ ելոյթ ունեցաւ Անթոնի Ղազալ, ապա աւագասրինգի վրայ գեղեցկօրէն օրդ. Արմիկ Հեքիմեան նուագեց «Կապտիկ»ը:

Օրուան բանախօսն էր լիբանանահայ հանրածանօթ երաժշտագէտ ու դասախօս Դոկտ. Էտի Թորիկեան, որ հանգամանօրէն ներկայացուց Կոմիտասի կեանքն ու գործունէութիւնը: Պատմական ակնարկ մը նետելով Կոմիտասի Էջմիածնի մէջ կեցութեան շրջանին, ան անդրադարձ կատարեց այդ օրերու տիրող մթնոլորտին երբ Աբովեանի «Վէրք Հայաստանի»ն անընդհատ կը կարդացուէր հայ երիտասարդութեան կողմէ:

«Ազգային ոգիին արթնութիւնը կ'ապրէր նաեւ Գէորգեան Ճեմարանի նոր սերունդը, Կոմիտաս վարդապետ, Մանուկ Աբեղեան եւ ուրիշներ: Կոմիտաս կ'ուզէր որ հայն ալ իր ինքնուրոյն, հարազա՛տ երգն ունենայ, հարուստ երգացանկով, գիտականօրէն ուսումնասիրուած եւ դաշնաւորուած, համաշխարհային ճանաչումով: Այդ նպատակին հասնելու համար ան կը զգար ու կը գիտակցէր թէ հարկ եղածին չափ երաժշտական ուսումնառութեան պակաս ունէր: Հարկ էր երաժշտական բարձրագոյն ուսում ստանալ եւրոպական երաժշտանոցի մը մէջ: Այդտեղ ընդունուելու համար՝ 26 տարեկանին, նախ Թիֆլիս մնաց շրջան մը, այդ օրերուն ամէնէն աւելի հռչակաւոր երաժիշտ Մակար Եկմալեանի մօտ նախապատրաստական տեսական գիտելիքներ ամբարելու համար: Ապա Պեռլինի մէջ մնաց երեք տարի (1896-1899), Ռիխարդ Շմիթի մասնաւոր երաժշտանոցը, ուր համբաւաւոր երաժիշտներ՝ կը դասաւանդէին երաժշտութեան պատմութիւն, տեսութիւն եւ յօրինում, դաշնամուր եւ երգեցողութիւն:

Կոմիտաս կը վերադառնայ Էջմիածին, զինուած տասնեակ մը մասնագիտութիւններով եւ կը սկսի ազգին ծառայել որպէս երաժիշտ, երգիչ, յօրինող, դաշնաւորող, երաժշտագէտ, ազգագրագէտ, բանահաւաք, բանաստեղծ, խմբավար, մանկավարժ, դասախօս, բանասէր-հրապարակագիր եւ չմոռնանք նաեւ՝ որպէս հայ կղերական»:

Ներկայ հանդիսականները յափշտակութեամբ կ'ունկնդրէին դոկտ. Էտի Թորիկեանի գիտելիքներով լեցուն բանախօսութիւնը, յատկապէս երբ ան կը ներկայացնէր մեր ազգի իսկական մեծերը: «1910-ին, Արմենական նշանաւոր գործիչ եւ գեղանկարիչ Փանոս Թերլեմեզեան Պոլիս կը գտնուէր, Կոմիտասին հետ, նոյն յարկին տակ, որ հետագային հանդիսացաւ իր ամէնէն մտերիմ բարեկամներէն մին: Տան երկրորդ յարկը Կոմիտաս կ'ապրէր, երրորդը՝ Փանոս, իր արուեստանոցով: Այդ տան մէջ կը հաւաքուէին հայութեան ակնառու դէմքերը՝ Վարուժան, Սիամանթօ, Զոհրապ, Ռուբէն Մեւակ, Երուխան եւ այլ երեւելի կրթական մշակներ: 1912-ին Թէրլէմէզեան մեծ երգահանին հետ կը մեկնի անոր ծննդավայրը՝ Կուտինա, ուր կը գտնէ Կոմիտասին նշանաւոր նկարը՝ ծառին տակ նստած, երաժշտական գործիքը կողքին, խորասուզուած ձայնանիշերու ընթերցանութեան մէջ»:

Հայ ժողովուրդին համար Կոմիտասի մեծութիւնը կը կայանայ նաեւ հայ երաժշտութիւնը օտարներուն ծանօթացնելու հանգամանքը: «Օտարներ կը համարձակէին պնդել, թէ հայ ժողովուրդը ինքնուրոյն երաժշտական մշակոյթ չունի՛: Հարկ էր ուրեմն ցոյց տալ հակառակը: Էջմիածնի ուսանողութեան պատանի տարիքէն՝ սկսաւ ժողովրդական երգեր հաւաքել, նոթագրել, գատել, զտել, միացնել, բազմաձայն դաշնաւորումներու ենթարկել, զանոնք յաճախակիօրէն սրբագրել, տարբերակներ պատրաստել, յետոյ՝ երգչախումբի համերգներով կամ առանձինն ներկայացնել համերգներ ու դասախօսութիւններ էջմիածին, Թիֆլիս, Պեռլին, Փարիզ, Զուիցերիա, Եգիպտոս, Կոստանդնուպոլիս, եւ դեռ՝ տպագրութեան յանձնել ու հրատարակել: Նոյն ատեն ալ ուսումնասիրե՛լ հայկական հին խազերը, եկեղեցական ու ժողովրդական հայ երգի կառուցուածքը, պատարագի երգերը դաշնաւորել, հայ եկեղեցական միաձեւ ու մաքուր երգեցողութեան համար պայքարիլ, կրթական ծրագիրներ պատրաստել, խմբավարներ պատրաստել...

Կարելի է ըսել որ Կոմիտասի կարեւոր ներդրումներուն մեծամասնութիւնը 15 տարուան ընթացքին կատարուած է Պեռլինէն վերադարձէն (1900) մինչեւ իր աքսորի ենթարկուելու թուականը՝ 1915-ին: Այս բոլորին շնորհիւ Կոմիտաս ոչ միայն յայտնաբերեց ու հաստատեց հայ ժողովուրդի երաժշտութեան ինքնութիւնը, այլ նաեւ մշակեց զայն եւ հասցուց դասական, իր ժամանակի երաժշտական համահաւասար՝ մեծ բարձրութեան, ծանօթացուց զայն եւրոպացիներուն ու հիմնադիրն եղաւ ազգային կոմպոզիտորական իսկական դպրոցին»:

«Այսօր, մենք որ հաւաքուած ենք Կոմիտասի մահուան 90-ամեակին առիթով, կրնանք ըսել թէ՝ որքան կը հեռանանք Կոմիտասէն, այնքան աւելի կը մօտենանք իրեն, կը ծանօթանանք իրեն: Մեզի կը մնայ ծանօթանալ նաեւ իր գործերուն, ծանօթացնել բոլոր ժողովուրդին, հասկնալ ու հասկցնել անոնց գեղարուեստական, ու մանաւանդ՝ ազգային արժէքները:

Յատկապէս այս օրերուն, երբ թեւակոխած ենք 21րդ դարու առաջին քառորդը, կ'ապրինք աշխարհայնացումի եւ քուայնացումի հորձանուտին մէջ, որ աներեւոյթ կերպով՝ արգե՛լք կը հանդիսանայ ազգային ինքնուրոյնութիւններու պահպանման: Մենք ի՞նչ կրնանք ուսանիլ Կոմիտասէն եթէ կ'ուզենք լրջօրէն նկատի առնել իր պատգամը. «Որքան ապրի հայկական երաժշտութիւնը, այնքան կ'ապրի Հայաստանը»: Եթէ Հայաստան գիտակից է այս պատգամին իրողութեան եւ ըստ այնմ պետական կամ անհատական ծրագիրներ կը մշակէ, մենք սփիւռքահայերս, մանաւանդ Լիբանանահայերս, որքանո՞վ այդ գիտակցութիւնն ունինք եւ ինչպիսի՞ մշակութային-գեղարուեստական միջոցառումներու կը դիմենք»:

Օրուան բանախօսը բարձր գնահատելով Լիբանանի Թէքէեան Մշակութային վարչութեան կողմէ կազմակերպուած սոյն ձեռնարկը նկատեց օրինակելի առաքելական միջոցառում մը եւ յայտնեց, թէ պայման չէ որ միշտ "ամեակ" մը ըլլայ, որպէսզի յաճախաբար նման ձեռնարկներ կրկնուին:

Ապա կոմիտասեան դասական երաժշտութիւնը հնչեց ԹՄՄ «Եռաբ Պենտ»ի քառեակի անդամներու կողմէ: Իսկ Կոմիտասի «Կռունկ»ը սրահին մէջ թեւածեց լիբանանահայ սոփրանօ տիկ. Միրէյ Քիւթիւքճեանի կողմէ, դաշնամուրի ընկերակցութեամբ լիբանանահայ արուեստագիտուհի տիկ Մարալ Առնելեանի: Կոմիտասի «Չինար ես» եւ «Տլէ եման» երաժշտութիւնը տուտուկի վրայ գեղեցկօրէն հնչեցուց հիւրաբար հրաւիրուած արուեստագէտ՝ տիար Յակոբ Քելուկեան:

Մեծապէս գնահատելի են գեղարուեստական յայտագրին բաժին վերցնող անհատները, սակայն մեր խորին երախտագիտութիւնը կը յայտնենք մայեսթրօ Վիգէն Չալեանին, որ ոչ մէկ ճիգ կը խնայէ «Եռաբ պենտ»ը իր բարձրունքին պահելու աշխատանքին մէջ:

Շնորհաւորելի է Լիբանանի ԹՄՄ Տեղական վարչութիւնը՝ ատենապետութեամբ Տոքթ. Յակոբ Փափազեանի: Անժխտելի իրականութիւն է, որ վարչութիւնս պիտի շարունակէ գործել անցեալին փորձառութեամբը զօտեպնդուած, հետապնդելով իր հիմնական նպատակակէտը՝ ՄՇԱԿՈՒԹԱՊԱՀՊԱՆՈՒՄ-ը:

Պ.Գ.

«ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Հանդիպում ԵՊԿ աշխատակազմի հետ

✔ Մարտի 6-ին Ղ. Սարյանի անվան օպերային ստուդիայի դահլիճում կայացավ հանդիպում ԵՊԿ աշխատակազմի հետ:

Ռեկտորի խորհրդական Գևորգ Մնացականյանը ներկայացրեց «Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի շենքի հիմնանորոգման ծրագրի» ընթացքը և պատասխանեց ներկաների հարցերին:

Ռեկտորի պաշտոնակատար Ծովինար Մովսիսյանն ընդգծեց, որ կոնսերվատորիան պասիվ չի և իբրև շահառու իր իրավունքը պետք է բարձրաձայնի: Նկատեց, որ ներքին հարդարման աշխատանքները չափազանց դանդաղ են ընթանում, դրանում համոզվել են վերջին ամիսների երեք շրջայցերի արդյունքում. սա ուղղակի պետական միջոցների ու ժամանակի վատնում է, որը գնում է ի վնաս մեր ուսումնական, աշխատանքային պրոցեսների, մեր առողջության:

Տիկին Մովսիսյանը նշեց, որ կլինի օբյեկտիվ պահանջ՝ ժամ առաջ կատարել այն, ինչը պարտավոր էին անել դեռ ամիսներ առաջ:

Ժողովի մասնակիցները բաց քվեարկությամբ լիազորեցին ռեկտորին աշխատակազմի անունից իրավիճակի մասին պատրաստել և կառավարությանն ուղղել համապատասխան գրություն:

✔ Մարտի 7-ին, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Ուսանողական փողային նվագախմբի և Փողային-հարվածային գործիքներ մասնագի-

ԵՊԿ ուսանողական փողային նվագախումբ

տացմամբ սովորող ուսանողների մասնակցությամբ տեղի ունեցավ Գարնանային համերգ:

✔ Մարտի 17-ին, Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում կայացավ համերգ ԵՊԿ դոցենտ Արմեն Ղուկասյանի նախաձեռնությամբ և Կամերային գործիքային անսամբլի ամբիոնի (վարիչ՝ պրոֆեսոր Իրինա Բաղայան) մասնակցությամբ:

Արմեն Ղուկասյան, Իրինա Բաղայան, Լիլիթ Խաչունց

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

✔ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանը Կոմիտասի թանգարան-ինստիտուտի անձնակազմին է ներկայացրել տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ արվեստագիտության թեկնածու, ԵՊԿ դոցենտ, երաժշտության պատմության ամբիոնի վարիչ Լուսինե Սահակյանին:

Լուսինե Սահակյան

✔ Ակադեմիական երգեցողություն ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Գայանե Գեղամյանն իր բազմամյա կատարողական ու մանկավարժական գործունեության համար արժանացել է շնորհակալագրերի: Դիպլոմները տրվել են ԱՄՆ Կալիֆոռնիայի նահանգի սենատոր Մարիա Էլենա Դուրացոյի և Գլենդելի քաղաքապետ Էլեն Ասատրյանի կողմից:

Գ. Գեղամյանը փետրվար ամսին ունեցել է համերգային ելույթներ՝ *«Huntington Beach Symphony Orchestra»*-ի հետ (դիրիժոր Հրանտ Սևդայան), իսկ Ֆրեզնոյի *«California State University»*-ի մեներգիչ ուսանողների հետ անցկացրել է վարպետության դաս: ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգի Ֆրեզնոյի *«California State University»*-ի *«College of Arts and Humanities»*-ի Վոկալ դեպարտամենտի համակարգող դոկտոր Մարիա Ս. Օկունև-Բրիգսը Ֆրեզնոյի պետական երաժշտական դպրոցի վոկալ ծրագրի անունից Գայանե Գեղամյանին փոխանցվել է շնորհակալական նամակ՝ 2025 թվականի փետրվարի 25-ին կայացած վարպետության դասի համար. *«Մեր ուսանողներն ստացել են ոչ միայն արժեքավոր պրոֆեսիոնալ հանձնարարություններ, այլ նաև՝ նոր հայացք սեփական աշխատանքին: Ձեր մոտեցումը, երգիչների հանդեպ ուշադրությունը և փորձով կիավելու պատրաստականությունն այդ վարպետության դասը հատկապես օգտակար և ոգեշնչող դարձրեցին: Շատ ուսանողներ նշեցին, որ ստացան ապագայում նրանց զարգացման համար աջակցող նոր հասկացություն: Մենք շատ ենք գնահատում Ձեր ժամանակը և մասնակցությունը մեր ուսանողների կրթական գործընթացում»:*

Գայանե Գեղամյան

✔ Ակադեմիական երգեցողություն ամբիոնի դոցենտ Մարիա Քոչարյանի մասնագիտական դասարանի 3-րդ կուրսի ուսանող Միլենա Սեդրակյանն ստացել է *«Nouvelles etoiles»* պատանի երաժիշտների 11-րդ միջազգային առցանց մրցույթի 2-րդ մրցանակը («Երգեցողություն» անվանակարգում): Նա ներկայացրել է Մարիայի արիան Գ. Դոնիձետտիի «Գնդի դուստրը» օպերայից և *«Vidit suum dulcem natum»* արիան Ջ. Բ. Պերգոլեզիի *«Stabat Mater»*-ից: Նվագակցել է Կատարինե Հովսեփյանը:

Միլենա Սեդրակյան

✔ Ակադեմիական երգեցողություն ամբիոնի պրոֆեսոր Արնոլդ Քոչարյանի մասնագիտական դասարանի 3-րդ կուրսի ուսանող Լևոն Ալմասյանը դարձել է *«Nouvelles etoiles»* պատանի երաժիշտների 11-րդ միջազգային առցանց մրցույթի 1-ին մրցանակակիր («Երգեցողություն» անվանակարգում): Դափնեկիրը ներկայացրել է Սերգեյ Ռախմանինովի Ալեկոյի կավատինան համանուն օպերայից և Արմեն Տիգրանյանի Դավիթ Բեկի արիան համանուն օպերայից, նվագակցող Աննա Ջալլադյան:



Լևոն Ալմասյան

https://www.facebook.com/YerevanStateConsevatory

Պատրաստեց՝
ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆԸ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁ

Երաժշտական անցուդարձը ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղում

ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի կամերային նվագախումբ, գեղարվեստական ղեկավար՝ Արամ Բաղայան, Գյումրիի Շերամի անվան երաժշտական դպրոցի ջութակի դասարանի սաներ՝ Քնարիկ Նիկոյան, Մանե Բաղդասարյան

✔ Փետրվարի 24-ին Գյումրիի Շերամի անվան երաժշտական դպրոցի դահլիճում ելույթ ունեցավ ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի կամերային նվագախումբը, գեղարվեստական ղեկավար՝ Արամ Բաղայան: Կամերային երաժշտության այս համերգը նաև երկու կրթօջախների համագործակցության յուրահատուկ դրսևորում էր. որպես մենակատարներ հանդես եկան դպրոցի ջութակի դասարանի աշակերտուհիներ Քնարիկ Նիկոյանը և Մանե Բաղդասարյանը, դասատու՝ Անահիտ Մկրտչյան: Նրանք կատարեցին Ա. Վիվալդիի երկու ջութակների և նվագախմբի Կոնցերտի առաջին մասը: Համերգի ընթացքում հնչեցին նաև Է. Էլգարի լարայինների «Սերենադը» և Կոմիտաս-Ասլամազյանի մանրանվագները:

✔ Մարտի 7-ին, ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղում վարպետության դաս անցկացրեց ԵՊԿ դաշնամուրային ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Իրինա Հակոբյանը: Մեծ հետաքրքրությամբ և արդյունավետությամբ հագեցած էր այս հանդիպումը, որը ոչ միայն հմուտ մասնագետից և կատարողական արվեստի մեծ գիտակից բացառիկ արժեքավոր դասեր քաղելու, այլև նրա հետ անչափ հետաքրքիր շփման դաշտ ունենալու, հաղորդակցվելու լավագույն հնարավորություն էր:

Իրինա Հակոբյանի վարպետության դասին

✔ 1988-ից հետո Գյումրիի հոգևոր վերածնունդն սկսվեց արվեստների ակադեմիայի հիմնադրումով: Կառույց, որտեղ կրթություն են ստանում ապագա երաժիշտները, նկարիչներն ու թատերական արվեստի ներկայացուցիչները: Քաղաքում մշակութային կրթական կենտրոն ունենալու գաղափարը կյանքի կոչվեց 1991-ին՝ իրանահայ, այդ դժվար տարիներին Հայրենիքում ապրող դիրիժոր և կոմպոզիտոր Լորիս Ճգնավորյանի ուխտագնացությամբ: Երևանից մինչև Գյումրի 8 օր ոտքով քայլելով մաեստրոն հանգանակություններ հավաքեց: Ծրագրին՝ հետո աջակցեցին «Հայաստան» համահայկական հիմնադրամը և Հայկական բարեգործական ընդհանուր միությունը: Լենինականի քաղաքային կոմիտեի նախկին կիսաքանդ շենքը վերածվեց արվեստների ակադեմիայի, որը գործում և զարգանում է առ այսօր: Ուխտագնացությունից 34 տարի անց Լորիս Ճգնավորյանը Գյումրիում էր:

2025 թ., մարտի 10-ին Գյումրիի Արվեստների ակադեմիայի հիմնադիր՝ անվանի կոմպոզիտոր և դիրիժոր Լորիս Ճգնավորյանը՝ «Ժամանակակից կոմպոզիտորները և կատարողները Գյումրիում» ծրագրի շրջանակներում սրտաբուխ և հուզառատ

ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի ռեկտոր Համիկ Հարությունյանը «Կոմիտասական» հուշամեդալ հանձնեց Լորիս Ճգնավորյանին

հանդիպում ունեցավ բուհերի հանրույթների և հյուրերի հետ:

Հիշողություններ 34 տարի առաջ նրա կատարած ուխտագնացությունից՝ գյումրեցիների սերը չի մոռացել, հուզվում է, աչքերն արցունքոտվում են, որոշել է, մի անկյուն է ունենալու Գյումրիում:

Ասում է, շատ վատ կընդունի այն լուրը, եթե կառավարությունը որոշի, որ իր *«կառուցած շենքում տեղակայված Արվեստի 3 բուհերի մասնաճյուղերը նույնպես տեղափոխել*

Լորիս Ճգնավորյանը ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղում

Ակադեմիական քաղաք, ու շենքը, որպես մշակութային օջախ կորցնի իր նշանակությունը», – Լ. Ճգնավորյան:

✔ Մարտի 16-ին Գյումրիի տեխնոլոգիական կենտրոնի դահլիճում հանդես եկավ ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի կամերային նվագախումբը: Գեղարվեստական ղեկավար՝ Արամ Բաղայան, մենակատար՝ Մերուժան Գևորգյան: Հնչեցին հայ կոմպոզիտորների ստեղծագործություններ և փոխադրումներ:

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի նախապատրաստական բաժնի ուսանող **Հարություն Ասատրյանին** (պրոֆեսոր՝ Ս.Կ.Քեչեկ)՝ Ֆերենց Լիստի անվան դաշնակահարների միջազգային մրցույթում 3-րդ մրցանակի արժանանալու առթիվ:

ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի 4-րդ կուրսի ուսանողուհի **Լյուդմիլա Հովսեփյանին** (դասախոս Լուսինե Ղուկասյան)՝ Ֆերենց Լիստի անվան դաշնակահարների միջազգային մրցույթում 2-րդ մրցանակի արժանանալու համար:

https://www.facebook.com/gyumriconservatory

«ԵՐԱԺԻՇՏ» ամսաթերթի 2025 թ. տարեկան հաշվետվություն*

	հազ. դրամ
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների իրացումից հասույթ (համախառն եկամուտ) ընդամենը	9.8
Այդ թվում եկամուտ՝ ամսաթերթի բաժանորդագրությունից, ամսաթերթի հատավաճառից, գովազդից	9.8
Նվիրատվության մասնաբաժնի չափը	0
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների իրացումից շահույթ (վնաս)	3.5

* Հրապարակվում է «Հանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն:

Շնորհակալություն ենք հայտնում երաժշտական տեսական առարկաների ուսուցչուհի Սուսաննա Մուշեղյանին (Լիտվա՝ Վիլնյուս)՝ «Երաժիշտ» ամսաթերթի 2025 թվականի սույն համարի տպագրության նյութական օժանդակության համար:

ՄԵԾԵՐԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Բնությունը արարիչն է բոլոր արարողների:

***

Բնությունը հավերժական կյանքն է, լինելիությունն ու շարժումը:

***

Բնությունը կապակներ չի ընդունում, նա միշտ ճշմարտացի է, միշտ լուրջ, միշտ խիստ, նա միշտ իրավացի է, իսկ սխալներն ու մոլորությունները մարդկանցից են բխում:

ԻՈՀԱՆ ՎՈԼՖԳԱՆԳ ԳՅՈԹԵ

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Վկայական N 03Ա059505 տրված 7.04.2003թ.

ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐ՝ Կոմիտասի անվ. ԵՊԿ ՊՈԱԿ
ՍԵՐԳԵՅ ՍԱՐԱՋՅԱՆ, ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ
Գլխավոր խմբագիր՝ ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆ
Թողարկման պատասխանատու՝ ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ
Խմբագիրներ՝ ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ (հայ. լեզու)
ՍՈՖԱ ԱԶՆԱՈՒՐՅԱՆ (ռուս. լեզու)
Գեղարվեստական խմբագիր՝
ԳՈՀԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արտատպումը միայն «Երաժիշտ» ամսաթերթի գրավոր արտոնությամբ: Խմբագրությունը միշտ չէ, որ համամիտ է հեղինակների կարծիքներին կամ տեսակետներին:
Նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում:

Ծավալը 12 էջ: Ստորագրված է 30.03. 2025:
Գինը 200 դրամ: Տպաքանակը՝ 101:

Մեր կայքում տեղ գտած հրապարակումների հեղինակային իրավունքը պատկանում է բացառապես «Երաժիշտ» ամսաթերթի «ԵՊԿ հրատարակչությանը» (http://yksclibrary.am/ conservatory.am): Այլ ԶԼՄ-ներում սույն կայքի հրապարակումներից որևէ մեկը ամբողջական վերահրապարակելու համար անհրաժեշտ է «ԵՊԿ հրատարակչության» (http://yksclibrary.am/ conservatory.am) համաձայնությունը: Լրատվամիջոցները կարող են «Երաժիշտ» ամսաթերթից մեջբերումներ վերահրապարակել միմիայն հատվածաբար՝ պարտադիր օգտագործելով հիպերհղում:

Գովազդի տեղադրման համար դիմել խմբագրություն նշված հասցեով.

0001, ք. Երևան, Մարկ Գրիգորյան 2
+374 10 52 39 93+118
+ 374 55 00 21 62
http://www.conservatory.am, http://yksclibrary.am/
E-mail: yerazhisht@gmail.com
https://www.facebook.com/Yerazhisht-newspaper-Yerevan-State-Conservatory-99649015050821 4/